

ՏԱՐՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ
ՔԻՄԱՏԱՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՓՈՔՐԻԿ ՏՆԱՅԻՆ ՀԱՄԱՐ




Հաստատեալ Հագեւոր իշխանութենէ
Եւ կիրառութիւնը նրամայեալ Հայ-Կաքողիկէ
հասարակութեանս ամեն դպրոցներու մէջ



Կ. ՊՈԼԻԽՈ
Ցպագր. Օսմ. Գործակցութան Ընկ.
Էյլուսունու ձաւելով Նօ. 27

1912



O.W. b6065

28(075)

T
261

ՏԱՐՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՓՈՔՔԻԿ ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ



Հաստատեալ Հոգեւոր իշխանութեանէ
Եւ կիրառութիւնը նրամայեալ Հայ-Կարողիւէ
հասարակութեանս ամէն դպրոցներու մէջ



Տպագր. Օսմ. Գործակցական Ընկ,

Կ. ՊՈԼԻՍ

Էպուստութ հաստէսի Նօ. 27

1912

ՀԱՅՈՐԴԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՐԴԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՐԴԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՐԴԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՐԴԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԵՐ ՍՈՒՔԸ ԿՐՈՆՔԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հարցում . Խաչակնքել ի՞նչ ըսել է :
Պատախան . Խաչակնքել ըսելն՝
ինքինքը խաչ նշանով կնքել , այ-
սինքն երեսը խաչ հանել ըսել է :

Հ . Ուրեմն երեսդ խաչ մը հանէ որ
աւենիմ :

Պ . Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ ամէն :

Հ . Քեզ ո՞վ է սաեղծեր :

Պ . Սասուած է սաեղծեր :

Հ . Սասուած քեզ ինչո՞ւ համար է
սաեղծեր :

Պ . Սասուած զիս սաեղծեր է որ-
պէս զի զինք ճանչնամ , սիրեմ , պաշ-
տեմ , իւր պատուիրանքները պահեմ և
երբ մեռնիմ արքայութիւն երթամ :

Հ . Սասուած ի՞նչ է :

Պ . Երկինքն ու երկիրը սաեղծող ,
ամէն բանի Տէր , ամենակատարեալ
էակ մ'է :

Հ. Քանի՞ Աստուած կայ :

Պ. Միմիայն մէկ Աստուած կայ :

Հ. Աստուած ո՞ւր է :

Պ. Աստուած ամէն տեղ է . թէ
երկինքի մէջ , թէ երկրիս վրայ և թէ
ուրիշ ամէն տեղ :

Հ. Աստուած ամէն բան կը տեսնէ :

Պ. Սյո' . Աստուած ամէն բան կը
տեսնէ , նոյն խակ մէր սրախն ծածուկ
խորհուրդներն ալ կը տեսնէ և կ'իմանայ :

Հ. Աստուած միշտ կա՞ր :

Պ. Սյո' . Աստուած միշտ կար և
միշտ ալ պիտի ըլլայ , ինչու որ յաւի-
տենական է :

Հ. Աստուած մեզի պէս մարմին
ունի՞ :

Պ. Աստուած մարմին չունի , որով-
հետեւ Աստուած պարզ հոգի մըն է :

Հ. Աստուած քանի՞ անձ ունի :

Պ. Աստուած երեք անձ ունի , որոնք
իրարմէ բոլորովին և իրօք տարբեր են :

Հ. Աստուածային երեք անձերուն
անուններն ի՞նչ են :

Պ. Աստուածային երեք անձերուն

անուններն են , Հայր Աստուած , Որդի
Աստուած և Հոգին Ս . Աստուած :

Հ. Աստուածային անձերն իրարու-
հաւասար են , չէ նէ մէջներնին պահա-
ւասարութիւն մը կայ :

Պ. Աստուածային երեք անձերն
կատարեալ կերպով իրարու հաւասար
են , ինչու որ երեքն ալ միեւնոյն պատ-
ռածածային բնութիւնն . կարգութիւննը
և իշխանութիւնն ունին , հետեւարար
մեծ ու պլամիկ չկայ մէջներնին :

Հ. Սյա երեք անձերուն միանգաւ-
մային ի՞նչ կըսուի :

Պ. Ամենասուրբ Երբորդութիւն
կ'ըսուի :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հ. Ամենասուրբ Երբորդութեան ո՞ր
մէկ անձը մարդ եղաւ :

Պ. Ամենասուրբ Երբորդութեան երկ-
րորդ անձը , այսինքն Որդին Աստուած
մարդ եղաւ :

Հ. Որդին Աստուած ի՞նչպէս մարդ եղաւ :

Պ. Որդին Աստուած, Հոգին Սուրբին զօրութեամբը՝ կոյս Մարփամին արդանդին մէջ մերինին նման մարմին մը և հոգի մը առնելով մարդ եղաւ :

Հ. Մարմին առնող և մարդ եղաղ Աստուծոյ Որդին անունն ի՞նչ է :

Պ. Մարմին առնող և մարդ եղաղ Աստուծոյ Որդին անունը Յիսուս Քրիստոս է :

Հ. Աստուծոյ Որդին ի՞նչու համար մարդ եղաւ :

Պ. Աստուծոյ Որդին մարդ եղաւ «զմեղ փրկելու համար» :

Հ. Ի՞նչ կը նշանակէ «մեղ փրկելու համար» :

Պ. «Մեղ փրկելու համար» ըսելն կը նշանակէ որ Որդին Աստուած մարդ եղաւ մեղ մեղքէն և դժոխքէն ապաւուրու, և մեղք՝ արքայութեան փառքը վաստկելու համար :

Հ. Արքայութեան մէջ ի՞նչ կը վայելին :

Պ. Արքայութեան մէջ միշտ Աս-

տուծոյ տեսութիւնը և ամէն տեսակ բարիք կը վայելին և բնաւ վիշտ, նեւ դութիւն կամ ցաւ չեն քաշեր :

Հ. Աստուած արքայութիւնը որո՞նց կուսայ :

Պ. Աստուած արքայութիւնը կուսայ անոնց ; որոնք այս աշխարհիս վրայ զինքը սիրած և իրեն ծառայած են :

Հ. Դժոխքին մէջ ի՞նչ կը քաշեն :

Պ. Դժոխքին մէջ գասապարտեալ ները մէշտ զուրկ կը մնան Աստուծոյ տեսութեանէն, բայց ասկից յաւկտենական կրակը և ամէն տեսակ թշուառութիւն կը կրեն, առանց երբէք որ և է բարիքի նշոյլ մ՛ունենալու :

Հ. Որո՞նք դժոխք կ'երթան :

Պ. Անոնք դժոխք կ'երթան որոնք այս աշխարհիս վրայ զԱստուած սիրել և անոր ծառայել չեն ուզած և իրենց գործած մեղքերուն վրայ չզղալով անզեղ վիճակի մէջ մեռած են :

Հ. Յիսուս Քրիստոս մեղ փրկելու համար ի՞նչ ըշաւ :

Պ. Մեղ փրկելու համար Յիսուս Քրիստոս չարքարանք քաշեց և խաչին վրայ մեռաւ :

ԳԼՈՒԽ ԵԲԱԲԱՐԴ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽՈՐ ԿԱՏԵՐԸ

Հ. Քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր կէտերը որո՞նք են :

Պ. Քրիստոնէական վարդապետութեան գլխաւոր կէտերը չորս են. Հաւատամի, Հայրելեր ու յերկինս, պատուիրանելեր և խորհուրդնելեր :

Հ. Հաւատամիքը ըսէ որ տեսնեմ:

Պ. 1. Հաւատամիք 'ի մի Սատուած, Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից :

2. Եւ 'ի մը պէր Յիսուս Քրիստոս Որդին Սատուածոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միամիջն, նախ քան զամենայն յաւիտեանս : Սատուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Սատուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած : Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և 'ի վերաց երկրի, երեւելիք և սներեւովթիք :

3. Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ Արրոյ կուսէն Հոգւովին որբով : Որով էտ մարմին, հոգի և միաս և զամենայն որինչ է 'ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք :

4. Զարչարեալ խաչեալ թազեալ :

5. Յերարդ աւուր յարուցեալ :

6. Ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նասաւ ընդ աջմէ Հօր :

7. Գալոց է նովին մարմնով և փառօք Հօր, 'ի դասել զիենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վարժան :

8. Հաւատամիք և 'ի Սուրբ Հոգին յանեղն և 'ի կատարեալն, որ 'ի Հօրէ և յիրդւոյ բղխի : Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարդարէս և յաւետարանս : Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և լմակեցաւ 'ի Սուրբան :

9. Հաւատամիք և 'ի մի միայն, յընդհանրական և յաստքելական Սուրբ եկեղեցի :

10. Ի մի մկրասութիւն, յապաշխառութիւն, 'ի քառասութիւն և 'ի թաղութիւն մեզաց :

11. Ի յարութիւն մեռելոց, 'ի գաւասատանսն յաւիտենից հոգւոց և մարմնոց :

12. Յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս :

Հ. Հայր Աեր որ յերկինս աղօթքն ըսէ որ տեսնեմ :

Պ. 1. Հայր մեր որ յերկինս, սուրբ Եղիշի անուն քո :

2. Եկեղեց արքայութիւն քո :

3. Եղիշին կամք քո, որպէս յերկինս և յերկրի :

4. Զայց մեր հանապազսրդ տուր մեզ այսօր :

5. Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապահնաց :

6. Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն :

7. Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ : Զի քոյ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն :

Հ. Հայր Աերէն զատ ուրիշ աղօթք ալ կա՞յ :

Պ. Այս՛, Ողջյն Քեզ Մարիամ աւզօթքը կայ, սրբ Սուրբ Կոյսը կ'ողջունենք և իր օգնութիւնը կը խնդրէնք :

Հ. Ողջյն Տեզ, Մարիամն բաէ որ տեսնեմ :

Պ. Ողջյն քեզ, Մարիամ, լի շնորհօք, Տէր լնտ քեզ, օրհնեալ ես գու 'ի կանայս և օրհնեալ է ստուզ որովայսի քո, Յիսուս : Սրբուհի Մարիամ, մայր Աստուծոյ, բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս, այժմ և 'ի ժամում մահուան մերոյ . ամէն :

Հ. Ամենասուրբ Երրորդութիւնը փառաբանելու համար ալ աղօթք մը կա՞յ :

Պ. Այս՛, Ամենասուրբ Երրորդութիւնը փառաբանելու համար փառի Հօր աղօթքը կայ :

Հ. Փառի հօր բաէ որ տեսնեմ :

Պ. Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն :

Հ. Աստուծոյ պատուիրաններն քանի են և որո՞նք են :

Պ. Աստուծոյ պատուիրաններն տառն
են և ասոնք են .

1. Ես եմ քու Տէր Աստուածդդ .
ինձմէ զատ Աստուած չունենաս :

2. Աստուծոյ անունը պարապ տեղ
լիրանդ մի՛ առներ :

3. Կիրակի և տօնի օրերը սուրբ
պահէ :

4. Հայրդ և մայրդ պատուէ :

5. Մի՛ սպաններ :

6. Մի՛ չսար :

7. Մի՛ գողանար :

8. Ընկերիդ վրայ ոռւտ վկայու-
թիւն մի՛ լներ :

9. Ծնկերիդ կնոջը մի՛ ցանկար :

10. Ծնկերիդ ունեցածին աչք մի՛
պնկեր :

Հ. Եկեղեցւոյ պատուիրաններն
քանի՞ են և որո՞նք են :

Պ. Եկեղեցւոյ պատուիրաններն չինդ
են և ասոնք են .

1. Կիրակի և տօնի օրերը պատա-
րագ տեսնել :

2. Միծ Պահքին մէջ և ուրիշ հրա-
մայութած օրերը պահք և ծոմ պահել :

Յ. Գոնէ տարին մէկ ամսգամ խոռ-
սովանիլ և Զատոկին հաղորդուիլ հայ
կաթողիկէ եկեղեցիներէն միսյն մէջ :

4. Ունեցածին տասնորդը Եկեղեց-
ւոյ տալ : Ըստ սովորութեան :

5. Սրգիլուած ժամանակիները հարա-
նիք չընել :

Հ. Խորհուրդները քանի՞ են և ո-
րո՞նք են :

Պ. Խորհուրդները եօթն են , 1 .
Մկրտութիւն , 2 . Դրոշմ , 3 . Հաղոր-
դութիւն , 4 . Ապաշխարտութիւն , 5 .
Վերջին օծումն , 6 . Կարգ քահանա-
յութեան , և 7 . Պատկ :

Հ. Այս խորհուրդներն ո՞վ հաս-
տառեց :

Պ. Այս եօթը խորհուրդները Յի-
սուս Քրիստոս հասաատեց :

Հ. Գլխաւոր մեղքերը քանի՞ են և
որո՞նք են :

Պ. Գլխաւոր մեղքերն եօթն են և
ուսոնք են .

1. Հոգարտութիւն

2. Նախանձ

3. Ագահութիւն

4. Բղջախոհութիւն
 5. Որդրամութիւն
 6. Բարկութիւն
 7. Ծուլութիւն :
 Հ. Խնչու համար այս մեղքերուն
 զիստոր մեղյ կ'ըսուի :
- Պ. Որովհետեւ այս մեղքերը ամբողջ
 ուրիշ մեղքերուն աղբիւրն և ար-
 մատն են :

ԳԼՈՒԽ ԵՐԻՌՈՐԴ

ՀԱՒՍՏՈՅ, ՅՈՒՍՈՅ, ՍԻՐՈՅ ԵՒ ԶՎԱՐՈՅ
 ՆԵՐԳՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Հ. Հաւասարյ ներգործութիւնն ըսէ
 որ աեանեմ :

Պ. Ո՞վ Աստուած իմ, հասաստուն
 հաւասարով կը հաւասամ, ինչպէս որ
 գուն անսփառ ճշմարսութիւն ըլլալով
 յայտնած ես Կաթողիկէ Եկեղեցոյ թէ
 Աստուած մէկ է, և իրարու հաւասար
 և իրարմէ տարբեր երեք անձ ունի,
 որ Հայր, Որդի և Հոգին սուրբը կը

կոչուին. թէ Հոգւոյն Սրբոյ զօրու-
 թեամբ Որդին Աստուած Ամենասուրբ
 կուսին արդանդին մէջ մարդկային
 մարմին և հոգի առնելով մարմնացաւ,
 մարդացաւ, մեզի համար խաչին վրայ
 մեռաւ, յարեաւ. Երկինք վերացաւ, և
 պիտի գայ աշխարհքիս ետքը կենդա-
 նիներն ու մեռեալները դատելու, ար-
 դարմաներուն յաւիսենական արքայու-
 թիւն, իսկ մեղաւորաց յաւիսենական
 գժութաք պիտի առյ : Կը հաւասամ դարձ-
 եալ այն ամէն ըստներուն որ կը հա-
 սատայ և կը սորզեցնէ Սուրբ Եկե-
 ղեցին :

Հ. Յուսոյ ներգործութիւնն ըսէ որ
 ահանեմ :

Պ. Ո՞վ Աստուած իմ, որավհետեւ
 ամենակարող ես ամենաբարի և ամե-
 նագութ. Փրկչին մերոյ Յիսուսի չար-
 չարանքներուն և մահուան արդեամբք
 կը յուսամ որ կը պարզեւես ինծի յա-
 ւիսենական կեանքը, և անոր համելու
 պէտք եղած միջայները զորոնք խոստա-
 ցար ամէն անոնց որոնք բարեպաշտ
 քրիստոնէի պէս կ'ապրին, ինչպէս որ

ես ալ կ'առաջարկեմ սովորելու քու
սուրբ օդնութեամբ:

Հ. Սիրոյ ներգործութիւնն ըսէ որ
տեսնեմ:

Պ. Ո՞վ Աստուած իմ, սրովհետե
գերագոյն բարի ես, ամենայն սրասվս
կը սիրեմ քեզ ամէն բանէ վեր, և
աւելի յանձն կ'առնեմ ամէն բանէ
զրկուիլ քան թէ զքեզ վշտացնել: Յու
սիրոյդ համար ընկերներո ալ իմ անձիս
պէս կ'ուղեմ սիրել:

Հ. Զղջման ներգործութիւնն ըսէ
որ տեսնեմ:

Պ. Ո՞վ Աստուած իմ քեզ վշտա-
ցուցած ըլլալուս համար բոլոր սրանց
կը ցաւիմ և կը զղջամ: Կը ցաւիմ որ
մեղանչելովս դժոխքի արժանի եղայ և
արքայութիւնը կորսնցուցի, բայց մե-
ծաղէս կը ցաւիմ քեզի պէս անհուն
բարի և մեծ Աստուած մը վշտացու-
ցած ըլլալուս համար: Աւելի կ'ուղէի
մեռնիլ քան թէ զքեզ դառնայուցած
լլալ: Հաստատ կիրարով կ'առաջարկեմ
այսուհետեւ բնաւ չմեղանչել և մեղքի
մերձաւոր ասիթներէն փախչիլ:

Հ. Դեռ ուրիշ ի՞նչ աղօթքով Ա-
մենասուրը կայոր կ'աղջունենք և անոր
օդնութիւնը կը խնդրենք:

Պ. Ողջ զեր թագուհի աղօթքովն ալ:

Հ. Ողջ զեր թագուհի աղօթքին աշ-
խարհաշարն ըսէ որ տեսնեմ:

Պ. Ողջոյն քեզի, ո՞վ թագուհի,
ողորմութեան մայր, մեր կեանքը,
քաղցրութիւնը և յոյսը, ողջոյն: Եւայի
տքսորեալ որդիքս քեզի կը գոչենք.
այս աբտուուայ վայրին մէջ սղբալով
և հեծելով քեզի կը հառաչենք: Սրդ,
ո՞վ բարեխօս մեր, ողորմութեան աշ-
ուլներդ մեզի գարձուր: Եւ այս աք-
սորանքէն ետքը՝ որովայնիդ օրհնեալ
պտուղն Յիսուսը մեզի ցուցուր, ով
գթած, ո՞վ բարեգութ, ո՞վ քաղցը
կոյս Մարիամ: Սուրբ Աստուածածին,
աղաչէ մեզի համար որ Քրիստոսի խոն-
առութիւնը արժանի ըլլանք, ամէն:

Հ. Ողջ զեր թագուհի աղօթքին գրա-
բարա ալ լսէ:

Պ. Աղջ լիր թագուհի, մայր ողորչ
մաւցեան, իւսանք, քաղցրութիւն և
յոյս մէր, ողջ լիր: Առ քեզ դուշեցք

աքսորեալ որդիքս Եւայի . առ քեզ
հառաջեմք հեծելով և ողբալով յայսմ
արտասուաց վայրի . Սրդ . ո՞վ բարեխօս
մեր , գարձո՞ւ առ մեզ զաշը ողորմու-
թեան քո . և զՅիսուս գօրհնեալ պառով
որովայնիքո յես այսր աքսորանաց ցայց
մեզ , ո՞վ գթած , ո՞վ բարեգութ . ո՞վ
քաղցր կոյս Մարիամ . աղաչեա՞ վասն
մեր Սուրբ Աստուածածին , զի արժանի
լիցուք խսամանցն Քրիստոսի . Ամէն :

Հ . Անկանիմք առաջի յոյ աղօթքն
ալ ըսէ :

Պ . Անկանիմք առաջի քոյ . Ասա-
ռւածածին . և աղաչեմք զանարատ
զկոյսդ : Բարեխօսեա՞ վասն անձանց
մերոց և աղաչեա՞ զմիտծին որդիդ :
Փրկել զմեզ ՚ի փորձութենէ և յամե-
նայն վտանգից մերոց :

Հ . Մէր պահապան հրեշտակն ի՞նչ
աղօթքով . կ'ողջունենք և օգնութեան
կը կանչենք :

Պ . Մէր պահապան հրեշտակը կ'ող-
ջունենք և օգնութեան կը կանչենք
Ո՞վ հրեշտակ Աստուծոյ աղօթքով :

Հ . Ո՞վ Հրեշտակ Աստուծոյ աղօթքին
աշխարհաբարան ըսէ :

Պ . Ո՞վ Աստուծոյ հրեշտակը . Դուն
որ աստուածային նախախնամութեան
բարերարութեամբք իսծի պահապան
կարգուած ես , լուսաւորէ զիս , պաշտ-
պանէ , ուղղէ և կառավարէ զիս .
Ամէն :

Հ . Այդ աղօթքին գրաբարն ալ ըսէ :

Պ . Ո՞վ հրեշտակ Աստուծոյ , որ
կարգեալդ ես ՚ի պահապանութիւն իմ ,
զյանձնեալս ՚ի քեզ վերնական գթու-
թեամբ , լուսաւորեա՞ , պաշտպանեա՞ ,
հովուեա՞ , ուղղեա՞ և կառավարեա՞ .
Ամէն :

Հ . Ամէն Կաթողիկէի հասարակ եղող
միւս աղօթքներն որո՞նք են :

Պ . Ամէն Կաթողիկէի հասարակ ե-
ղող միւս աղօթքներն են Խոստիշա-
նիւ Սոռարի . Հրեշտակ Տեառն և նոցեց-
եալներուն համար Զիանզիս յափենա-
կան աղօթքն :

Հ . Խոստիշանիմը ըսէ որ աեռնեմ :

Պ . Խոստովանիմ առաջի Աստուծոյ
ամենակարողի , երանելւոյն Մարիամու
միշա կուսին , երանելւոյն Միքայէլի
հրեշտակապետին , երանելւոյն Յով-

Հանուն : Մ'կրտչին , սրբոց առաքելոցն
Պետքափի և Պօղոսի և Սրբոց Հօրն մե-
րոյ Գրիգորի Լուսաւորչին և ամենայն
սրբոց , և առաջի քո , Հայր Սուրբ ,
քանզի մեղայ յոյժ խորհրդավ . բա-
նիւ և գործով , վայ ինձ , վայ ինձ և
յուէտ վայ ինձ :

Հ . Հրեշտակ Տեառն աղօթքին աշ-
խարհաբարն ըսէ :

Պ . Տիրոջ հրեշտառկը Մարիամու ա-
ւետեց , նա ալ Հոգևով Սրբով յղացաւ :
Ողջոյն Քեզ Մարիամ եւն . :

Ահաւասիկ Տիրոջ աղախինը , քու
խօսքիդ համեմատ թող պլայ ինծի :
Ողջոյն քեզ : Եւ Բանն Մարմին եղաւ
և մեր մէջ բնակեցաւ , Ողջոյն քեզ :

Հ . Այս աղօթքին գրաբարն ալ ըսէ :

Պ . Հրեշտակ Տեառն աւետեաց արայ
կուսին Մարիամու և յղացաւ 'ի Հոգ-
ւոյն Սրբոյ : Ողջոյն քեզ Մարիամ :

Ահաւասիկ կամ աղախին Տեառն :
Եւ յի ինձ լսա բանէ քում : Ողջոյն
Քեզ : Եւ Բանն մարմին եղեւ և բնակ-
եաց 'ի մեղ : Ողջոյն Քեզ :

Աղաչեա՛ վասն մեր , Սուրբ Սոս-

ուածածին , զի արժանի լիցուք խստ-
մանցն Քրիստոսի :

Ս. Պարք : Աղաչեամք զքեզ , Տէր , հեզ
զնորդն քո 'ի միաս մեր , որպէս զի սրբ
աւետեօք հոեշտակին զմարդեզա թիւն
Որդւոյ քո Քրիստոսի ծանեաք , 'ի ձեւն
չորչարանաց և խաչի Հորա առաջնորդ-
եալ հասցուք 'ի փառս յարութեան ,
'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր : Ամէն :

Հ . Հրեշտակ Տեառնը ե՞րբ պէտք է
աղօթէնք :

Պ . Առաւօտուն , կէս օրին և իրիկ-
ուան զանդակ զարնուած առեն պէտք
է աղօթէնք :

Հ . Զհանգիս յաւիտենականին աշ-
խարհաբարն ըսէ որ աեսնեմ :

Պ . Ո վ Տէր , անոնց յաւիտենականն
հանգիստ պարգևէ : Թող անմայ վրայ
մշանցինաւոր լոյս ծագի և խաղաղու-
թեամբ հանգչին : Ամէն :

Հ . Այս աղօթքին գրաբարն ալ ըսէ :

Պ . Զհանգիստ յաւիտենական պար-
գևէն՝ նայս Տէր : Եւ լսո մշանցին-
նուոր ծագեսցի 'ի նոսու և հանդիցին
'ի խաղաղութեան : Ամէն :

Հ . Քաւարանի հոգիներուն համար
ըստւած միւս աղօթքն ո՞րն է :
Պ . Ի խորց կարդացի սաղման է :
Հ . Այդ սաղմար կրկնէ որ լսեմ :
Պ . Ի խորց կարդացի առ քեզ :
Տէր . Տէր լուր ձայնի իմում :
Եղիցն ականջք քո 'ի լսել զձայն
աղօթից խորց :
Թէ զանօրէնսութիւնս քննես Տէր ,
Տէր ո՞ կարէ կալ առաջի քո , զի 'ի քէն
է քաւութիւն :
Վաշն անուան քո համբերի , Տէր ,
համբեր անձն իմ բանի քում . յուսա-
ցաւ անձն իմ 'ի Տէր :
'ի պահէ առաւօսու մինչև յերեկոյ ,
'ի պահէ առաւօսու յուսացաւ իսրայէլ
'ի Տէր :
Ի Տեառնէ է ողօրմութիւն բազում
և 'ի նմանէ է միրկութիւն , և նա փրկ-
եաց զիսրայէլ յամենայն նեղութեանց
նորս :

Փառք Հօր : Այժմ և միշտ :

~~~~~

## ՊԶՏԻԿ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

### Ա.Օ.Ս.ՁԻՆ. Մ.Ս.Ս

ՀԱԽԱՏՔԻ ԳԼԽԱԿՈՐ ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ  
~~~~~

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ԿՇԱՆԻՆ ՎՐԱՅ

Հ . Դուն քրիստոնեայ ես :
Պ . Այս' , Աստուծոյ շնորհքովը
քրիստոնեայ եմ :
Հ . Քրիստոնեայ ըլլալ լսելն ի՞նչ
կը նշանակէ :

Պ . Քրիստոնեայ ըլլալ լսելն՝ Քրիս-
տոնի հաւաքքը և օրէնքը դաւանել կը
նշանակէ :

Հ . Մէկը ի՞նչպէս քրիստոնեայ կ'ըլլայ :
Պ . Սուրբ մկրտութիւնով :
Հ . Քրիստոնէին նշանը ո՞րն է :
Պ . Քրիստոնէին նշանը Սուրբ Խաչի
նշանն է :

Հ. Դուն գքեզ ի՞նչպէս կը խոչակնքես :

Պ. Ի՞նքինքս խաչակնքելու համար աջ ձեռքս ճակատս կը տանիսմ և կ'ըսեմ . Յանուն Հօր . ետքը ձեռքս կուրծքս կ'իջեցնեմ և կ'ըսեմ եւ Արդիշ , յետոյ Ճափս և աջ ուռուրսւս տանելով կ'ըսեմ եւ Հոգւոյն Մրդոյ , վերջապէս կ'ըսեմ ամեն :

Հ. Խաչի նշանը ինչո՞ւ համար քրիստոնէին նշանն է :

Պ. Խաչին նշանը անոր համար քրիստոնէին նշանն է , սրբավետ քրիստոնեաները և անհաւասները այդ նշանով իրարմէ կը տարբերին :

Հ. Խաչի նշանը ի՞նչ կը նշանակէ :

Պ. Խաչի նշանը մեր սուրբ հաւատքին գլխաւոր խորհուրդներն որո՞նք են :

Հ. Մեր սուրբ հաւատքին գլխաւոր խորհուրդներն որո՞նք են :

Պ. Մեր սուրբ հաւատքին գլխաւոր խորհուրդներն ոյս երկու հետեւետլներն են , 1. Ամենասուրբ երրորդութեան խորհուրդը : 2. Յիսուս Քրիս-

տոմի մարգեղութիւնը , չարչարանքը և մահք : Սյս խորհուրդը Մարդկութիւն կամ Փրկազործութիւն ալ կ'ըսուի :

Հ. Ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ միւրինը :

Պ. Ասուծոյ միւրինը կը նշանակէ թէ միմբայն մէկ Աստուծոյ կայ :

Հ. Երրորդութիւն ի՞նչ կը նշանակէ :

Պ. Երրորդութիւն բաելով կը համակնամ թէ Աստուծոյ երեք անձ ունի որոնք իրարու հաւատքը և իրարմէ տարբեր են և կ'ըսուին Հայր Արդի և Հոգին Սուրբ :

Հ. Խաչի նշանով ի՞նչպէս կը յայտնէնք Աստուծոյ միան երրորդութեան խորհուրդները :

Պ. Խաչի նշանակէ Աստուծոյ միութեան և Երրորդութեան խորհուրդները այսպէս կը յայտնէնք : Յամուն Ըսելով կը հասկցնենք թէ Աստուծոյ մէկ է : Խակ Հօր և Արդիշ և Հոգւոյն Մրդոյ ըսելով կը հասասատենք թէ Աստուծոյ իրարմէ տարբեր երեք անձ ունի :

Հ. Ի՞նչ կը նշանակին Յիսուս Քրիստու մարգեղութիւնը , չարչարանքը և մահք :

Պ. Յիսուս Քրիստոսի մարդեղութիւնը , չարչարանքը և մահը կը նշանակեն թէ Սասուծոյ Որդին մեզ փրրկելու համար մարդեղաւ , չարչարանքներ քաշնց և խաչի վրայ մնաւա :

Հ. Խաչի նշանավ ի՞նչպէս կը յայտնենք Տէրն մեր Յիսուս Քրիստոսի մարդեղութեան , չարչարանքներուն և մահուան խորհուրդը կը յայտնենք . ուրագնեաւ այս նշանը մեզի կը յիշեցնէ թէ Սասուծոյ Որդին չարչարանքներքաշած և խաչին վրայ մնաւած է :

Հ. Սաէպ ինքզինքը խաչակնքել օգտակար է :

Պ. Սաէպ ինքզինքը խաչակնքելն շատ օգտակար է , որովհեաւ այդ նշանը զօրութիւն ունի ։ աւատքը կենդանացընելու , փորձութիւնները || անհետաց ցընելու և մեզի շատ մը շնորհքներ ընդունալու Սասուծմէ :

Հ. Երբ պէտք է ինքզինքը խաչակնքել :

Պ. Ինքզինք պէտք է խաչակնքել առաւօսուն՝ անկողնէն ելուծ առեն , իրիկունը՝ պառկելէն առաջ , կերակուրներէն և գործք մը սկսելէն առաջ և վերջը , եկեղեցի մանելու և ելլելու առեն , և մասնաւորապէս ազօթք մ'ընէլէն առաջ :

Գլուխ Երկրորդ

ՄԵՌԱԹԻԵՆ ԵԿ ԵՐԲՈՐԴՈՒԹԻԵՆ ԱՍՏՈՒՆՈՅ

Հ. Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդ ըսելով ի՞նչ կը հասկնաս :

Պ. Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդ ըսելով կը հասկնամ թէ Սասուծած մէկ է , բայց իրարմէ զանազան երեք անձ ունի . Հայր , Որդի և Հոգին Սուրբ :

Հ. Երեք զանազան անձ ըսելով ի՞նչ կը հասկնաս :

Պ. Կը հասկնամ թէ մէկ անձը միւս անձը չէ , այս նքն Հայր՝ Որդի չէ . Որդին՝ Հոգին Սուրբ չէ , և ոչ ալ Հոգին Սուրբ՝ Հայր կամ Որդի է :

Հ . Ամենասուրբ Երրորդութեան ա-
ստաջին անձը ս՞րն է :

Պ . Ամենասուրբ Երրորդութեան ա-
ստաջին անձն է Հայր Աստուած :

Հ . Ամենասուրբ Երրորդութեան
Երկրորդ անձը ս՞րն է :

Պ . Ամենասուրբ Երրորդութեան
Երկրորդ անձն է Որդին Աստուած :

Հ . Ամենասուրբ Երրորդութեան Եր-
րորդ անձը ս՞րն է :

Պ . Ամենասուրբ Երրորդութեան Եր-
րորդ անձն է Հոգին Սուրբ Աստուած :

Հ . Ինչո՞ւ համար Հայր Աստուած
Ամենասուրբ Երրորդութեան աստաջին
անձն է :

Պ . Ինչու որ Հայր Աստուած ուրիշ
անձէ ար յատաջ չի գար . այլ ինքը
մէկալ Երկու անձերուն ալ սկիզբն է .
պատճառն է :

Հ . Ինչո՞ւ համար Որդին Աստուած
Ամենասուրբ Երրորդութեան Երկրորդ
անձն է :

Պ . Ինչու որ Որդին Աստուած՝ Հայր
Աստուածէն ծնած է :

Հ . Ի՞նչու համար Հոգին Սուրբ

Աստուած Ամենասուրբ Երրորդութեան
Երրորդ անձն է :

Պ . Ինչու որ Հոգին Սուրբ ՚ի Հօրէ
և յՈրդւոյ կրթզիսի :

Հ . Հայր Աստուած է :

Պ . Այո՛ . Հայր Աստուած է :

Հ . Որդին Աստուած է :

Պ . Այո՛ . Որդին Աստուած է :

Հ . Հոգին Սուրբ Աստուած է :

Պ . Այո՛ . Հոգին Սուրբ Աստուած է :

Հ . Եթէ ամէն մէկ անձը Աստուած
է, ուրեմն երեք Աստուած կայ :

Պ . Ամենասուրբ Երրորդութեան Ե-
րեք անձերը երեք Աստուած չեն, այլ
մի միայն մէկ Աստուած :

Հ . Ամենասուրբ Երրորդութեան Ե-
րեք անձերը մէկ Աստուած են :

Պ . Ամենասուրբ Երրորդութեան Ե-
րեք անձերը մէկ Աստուած են, ինչու
որ ամէն մէկ աստուածային անձ մի-
եւնոյն աստուածային բնութիւնն ունի,
և աստուածային բնութիւնն ալ մի մշ-
այն մէկ համակ է :

Հ . Սյս երեք անձերէն ս՞րը ամէ-
նէն աւելի կարսկ և ամէնէն աւելի ի-
մաստուն է :

Պ. Ամենասուրբ Երրորդութեան հըբեք անձերն ալ իրարու հաւասար են . ինչու որ միւնայն ասառւածային բնոււթիւնն ունենալով , հետեւ արար միւնայն ալ կարողութիւնը , միւնայն իմաստութիւնը և միւնայն բնութիւնն ունին :

Հ. Հայր Աստուած՝ Որդիէն և Հոգին Սուրբէն առաջ չե՞ր :

Պ. Հայր Աստուած Որդիէն և Հոգին Սուրբէն առաջ չե՞ր . ինչու որ աստուածային երեք անձերն ալ հուասարապէս յաւիտենական են :



ԳԼՈՒԽ ԵԹՐՈԲԻ

Ա.ՍՈՅԻՆԾՈՅ ՈՐԴԻՆՅԵ ՄԱՐԴԵՐՈՒԹԵՈՆ Վ.ԲՈՅ

Հ. Մարդեղութիւն բառը ի՞նչ կը նշանակէ :

Պ. Մարդեղութիւն բառը կը նշանակէ թէ Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ անձը , այսինքն Որդին Աստուած մարդ եղաւ :

Հ. Որդին Աստուած ի՞նչպէս մարդեղաւ :

Պ. Որդին Աստուած՝ Հոգին Ասրբին զօրութեամբը ամենասուրբ Կուսին մաքուր արգանդին մէջ մերինին նման մարդին և հոգի մ'առնելով մարդեղաւ :

Հ. Աստուածոյ Որդին մարդ ըլլաւ լով՝ գաղրեցու Աստուած լլալէն :

Պ. Աստուածոյ Որդին մարդ ըլլաւով չդադրեցաւ Աստուած լլալէ . հապա Աստուած մասլով հանդերձ սկսու ճշշմարւա մարդ ալ ըլլալ :

Հ. Մարդ եղած Աստուածոյ Որդին ի՞նչ կը կոչուի :

Պ. Մարդ եղած Աստուածոյ Որդին Յիսուս Քրիստոս կը կոչուի :

Հ. Յիսուս Քրիստոս միշտ եղած է :

Պ. Յիսուս Քրիստոս իրեւ Աստուած միշտ եղած է , իսկ իրեւ մարդ սկսած է ըլլալ մարդեղութեան վայրէկեանէն ՚ի վեր :

Հ. Յիսուս Քրիստոսի Հայրն ո՞վ է :

Պ. Յիսուս Քրիստոսի մէկ հատիկ Հայր՝ Հայր Աստուածն է , վասն զի

Հոգին Սուրբին զօրութեամբը Կոյս
Մարիամին ծնող Յիսուս Քրիստոս մը-
եւնայն Աստուծոյ Որդին է որ Ամենա-
սուրբ Երրարդութեան տռաջին Անձն
ծնած է ըստ որում Աստուծած :

Հ . Յատուծոյ Որդին ինչու համար
մարդ եղաւ :

Պ . Աստուծոյ Որդին մարդ եղաւ
մեղ փրկելու համար :

Հ . Եթէ Աստուծոյ Որդին մարդ
չըլլար , մենք զմեղ չեխոք կրնար
փրկել :

Պ . Եթէ Աստուծոյ Որդին մարդ
չըլլար , մենք զմեղ չեխոք կրնար փըր-
կել , ինչու որ մեր նախանայրը Աղա-
մին մեղքով սատանային գերի եղած
և արքայութենէն ալ արտաքսուած
էինք :

Հ . Աղամին մեղքը ո՞րն եղաւ :

Պ . Աղամին մեղքը հպարտութեան
և ծանր անհնազանդութեան մեղք
մ' եղաւ :

Հ . Աղամին մեղքը մեղի ի՞նչ վետո
հասյուց :

Պ . Աղամին մեղքը պատճառած

վասներն են , Առառ ծոյ չնորհքէն
զրկում . տգիսութիւն , դէպ 'ի չարը
յօժարութիւն , ման և բոլոր ուրիշ
թշուառութիւնները :

Հ . Յիսուս Քրիստոս ո՞ւր ծնաւ :

Պ . Յիսուս Քրիստոս Բեթղեհէմ քա-
ղաքը ախոսի մը մէջ ծնաւ և մսուրի
մը մէջ դրուեցաւ :

Հ . Ինչու համար Յիսուս Քրիստոս
ասանկ աղքատ ծնանել ուզեց :

Պ . Յիսուս Քրիստոս ասանկ աղ-
քատ ծնանել ուզեց որ մեզի սորվեցնէ
թէ պէտք չէ մենք մեր երջանկութիւնը
հարատութիւններու , փառքերու և այս
աշխարհիս հաճոյքներուն մէջ փնտուենք :

Հ . Յիսուս Քրիստոս իր մահկանա-
ցու կեանքին մէջ խօսքով և օրինակով
արքայութեան ճամբան սորվեցուց և
իր վարդապետութիւնը հրաշքներով
հաստատեց :

Հ . Յիսուս Քրիստոս մեզ փրկելու
համար ի՞նչ ըրաւ :

Պ . Յիսուս Քրիստոս մեզ փրկելու

համար չարչարանք քաշեց և իսակին
վրայ մեռաւ :

Հ . Յիսուս Քրիստոս իրրեւ Աստ-
ուած մեռաւ , թէ իրրեւ մարդ :

Պ . Յիսուս Քրիստոս իրրեւ մարդ
մեռաւ , ինչու որ իրրեւ Աստուած չէր
կրնար ո՛չ չարչարուիլ և ոչ ալ մեռնիլ :

Հ . Յիսուս մեռնելէն ետքը անոր
մարմինն ի՞նչ եղաւ :

Պ . Յիսուս մեռնելէն ետքը անոր
մարմինը թաղուեցաւ :

Հ . Հապա Քրիստոսի հոգին ո՞ւր
գնաց իր մեռնելէն ետքը :

Պ . Յիսուս մեռնելէն ետքը անոր
հոգին լիմպոս իջաւ արդար նախա-
հայրներուն հոգիները փրկելու համար ,
այսինքն իրմէն առաջ մեռնող սուրբ
մարդիկներուն հոգիները :

Հ . Յիսուս Քրիստոսի սուրբ մար-
մինը քանի՞ օր մնաց գերեզմանի մէջ :

Պ . Յիսուս Քրիստոսի սուրբ մար-
մինը գերեզմանի մէջ մնաց երեք օր ,
բայց ոչ ամբողջ , այսինքն հոն մնաց
Ուրբաթ օրուան մէկ մասը , ամբողջ
շաբաթ օրը , մընչեւ Կիրակի օրուան

արշալոյսը : Ետքը փառաւոր և յաղ-
թական կերպով յարութիւն առաւ , և
ա՛յլ եւս չպիտի մեռնի :

Հ . Յարութիւն մոաւ ի՞նչ կը նշա-
նակէ :

Պ . Յարութիւն առաւ լոելը կը
նշանակէ թէ Յիսուսին հոգին նորէն իր
մարմինին հետ միացաւ :

Հ . Յիսուս յարութիւն առնելէն
ետքը ո՞րչափ ժամանակ մնաց այս աշ-
խարհիս վրայ :

Պ . Յարութիւն առնելէն ետքը Յի-
սուս այս աշխարհիս վրայ քառասուն
օր մնաց իր աշակերտները հաւատքի
մէջ հաստատելու համար :

Հ . Այդ քառասուն օրէն ետքը Յի-
սուս Քրիստոս ո՞ւր գնաց :

Պ . Այդ քառասուն օրէն ետքը Յի-
սուս Քրիստոս երկինք վերացաւ և աւ-
մենակարող Հօր Աստուծոյ աջ կողմը
նստաւ :

Հ . Յիսուս Քրիստոս երկինքէն Հո-
գին Սուրբը զրկեց իր Եկեղեցւոյն :

Պ . Յիսուս Քրիստոս Երկինք վե-
րանալէն տասը օր ետքը (Պէստէկոստէ)

Հոգեգալստեան օրը Հոգին Սուրբք
դրկեց իր Եկեղեցւոյն :

Հ . Յիսուս Քրիստոս մի միայն եր-
կի՞նքը կը գտնուի :

Պ . Յիսուս Քրիստոս իբրև Սոսուած՝
ամէն աել է, և իբրև մարդացեալ
Աստուած՝ երկինքը և ամենասուրբը՝
Պալորդութեան մէջ է :



Գլոխ ԶՈՐՅՈՒԹԻ

ԱՇԽԱՋԱՄ ՎԵՐՋԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳՈԼՍԵԱՆԲ , ԵՒ ԱՌԱՇԽԱԿԱՆ ՅԻ
ԸՆՀԱՆՈՒՐ ԵՐԿՈՒ ԳՍՏԱՍՏԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ:

Հ . Յ սուս Քրիստոս ահսանելի կեր-
պով նորէն այս աշխարհքու պիտի գա՞յ ,

Պ . Յ սուս Քրիստոս աշխարհիս-
վերջը՝ տեսանելի կերպով նորէն այս
աշխարհքու պիտի գայ և կենդանիները
ու մեռելու այսինքն բարիները ու
չարերը պիտի գա՞յ :

Հ . Յ սուս Քրիստոս ի՞նչ բաներու
համար մեզ պիտի ո՞ւ ատէ :

Պ . Յիսուս Քրիստոս մեզ պիտի
գտատէ կեանքերնուս մէջ գործուած
ամբողջ բարիքին և չարիքին համար :

Հ . Մեր մեռնելէն անմիջապէս ետքը
մեր հոգին ի՞նչ պիտի ըլլայ :

Պ . Մեր մեռնելէն անմիջապէս ետքը
մեր հոգին՝ իր բոլոր գործքներուն
հաշիւը ատլու համար Յիսուս Քրիս-
տոսի ատեանը պիտի ներկայանայ :

Հ . Ուրեմն երկու դատաստածն պիտի
ըլլայ :

Պ . Այս՝ երկու դատաստան պիտի
ըլլայ . մին՝ առանձնական այսինքն մեր
մահէն անմիջապէս ետքը , իսկ միւսը՝
ընդհանրական , այսինքն՝ այխարհիս
վերջո :

Հ . Առանձնական դատաստանէն
ետքը մեր հոգին ի՞նչ պիտի ըլլայ :

Պ . Առանձնական դատաստանէն
ետքը մեր հոգին եթէ բոլորովին ան-
մեզ է և քաւելիք պատիժ մը չունի .
չիտակ արքայաւթիւն կ'երթայ , եթէ
մահու չափ մեղքի վիճակի մէջ գրո-
նուի , գժոխուք կ'երթայ : Իսկ եթէ
չնորհքի վիճակի մէջ զանուի . բայց

աստուածային արդարութեան վճարելիք պարտք ունենայ, արքայութիւնն երթալէն առաջ Քաւարան կ'երթայ:

Հ. Քաւարան ի՞նչ է:

Պ. Քաւարան քաւութեան տեղ մընէ, ուր կ'որթան անոնք որոնք թէն Աստուծոյ չորհքին մէջ մեռած են, սակայն ամբողջովովն չեն վճարած աստուածային արդարութեան ունեցած պարտքերնին:

Հ. Քաւարանի հոգիներուն ցաւը կրնա՞նք սփոփել, կրնա՞նք իրենց օդնել:

Պ. Այո՛, Քաւարանի հոգիներուն ցաւը կրնանք սփոփել, կրնանք իրենց օդնել ազօթքով, նեղութիւններով, ողորմութիւն տալով, և ուրիշ բարեգործութիւններով, բայց մանաւանդ սուրբ պատարագով:

Հ. Սրդեօք մեր մարմինը բնաւ յաւրութիւն պիտի չառնէ:

Պ. Մեր մարմինը ընդհանուր դատաստանին օրը յարութիւն պիտի առնէ: և դատաստանէն ետքը՝ իր բարի կամ չար գործքերուն համեմատ արքայութիւնն կամ դժոխք պիտի երթայ:

Հ. Ասոյդ է թէ դժոխք մը կայ: Պ. Այո՛, սասոյդ է թէ դժոխք մը կայ, ինչու որ Հաւատքը մեզ կը սորվեցնէ:

Հ. Զարերը ո՞րպափ ժամանակ դժոխքին մէջ պիտի մնան:

Պ. Զարերը դժոխքին մէջ պիտի մնան յաւիտեանս յաւիտենից:

Հ. Մի միայն մէկ մեղքով ալ դժոխք կ'երթցութիւն:

Պ. Այո՛ մարդ մի միայն մէկ մաշնուչափ մեղքով ալ դժոխք կ'երթայ:

Հ. Բարիները ո՞րչափ ժամանակ պիտի մնան արքայութէան մէջ:

Պ. Բարիները պիտի մնան արքաւյութեան մէջ յաւիտեանս յաւիտենից:

Հ. Բոլոր մարդիկներն ալ արքայութեա՞ն համար ստեղծուած են:

Պ. Այո՛, բոլոր մարդիկներն ալ արքայութեան համար ստեղծուած են:

Հ. Ուրեմն ինչո՞ւ համար ամէն մարդ արքայութիւն չերթար:

Պ. Ամէն մարդու արքայութիւնն չերթալուն պատճառը այն է որ վըրկութեան հասնելու համար պէտք եղածը ամէն մարդ չի կատարեր:

Հ . Փրկութեան հասնելու համար
ի՞նչ պէտք է ընել :

Պ . Փրկութեան հասնելու համար
պէտք է հաւատաւ : Յիսուս Քրիստոսի,
և Սստուծոյ ու Եկեղեցւոյ պատուի-
րաններուն համաձայն կեանք անցնել :

~~~~~

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՄԵՂԱՅ  
ԹՈՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՍՐԲՈՅ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ  
ՎՐԱՅ

Հ . Կաթողիկէ Սուրբ Եկեղեցին  
ի՞նչ է :

Պ . Կաթողիկէ Սուրբ Եկեղեցին՝ ժո-  
ղովը և մըութիւնն է այն ամէն մար-  
դիկներուն որո՞ք մկրտուած ըլլալով  
կը հաւատան և կը գաւանին Յիսուս  
Քրիստոսի հաւատաքը , կը հաղորդակցին  
միեւնոյն խորհուրդներուն և միեւնոյն  
երեւելի գլխոյ մը կառավարութեան  
ներքեւ կը գտնուին :

Հ . Ո՞վ է այս եղեւելի գլուխը  
Քրիստոսի Եկեղեցւոյն :

Պ . Ե Հռոմայ Սրբազան Քահանա-  
յապետն՝ որ է փոխանորդ Յիսուսի Քրիս-  
տոսի Երկրիս վրայ՝ որուն պէտք է հսա-  
զանդի ամէն հաւատացեալ :

Հ . Եկեղեցին ո՞վ հաստատեց :

Պ . Տէրն մեր Յիսուս Քրիստոս հաս-  
տատեց Եկեղեցին :

Հ . Յիսուս Քրիստոս ինչո՞ւ համար  
Եկեղեցին հաստատեց :

Պ . Յիսուս Քրիստոս Եկեղեցին ա-  
նոր համար հաստատեց որ բոլոր մար-  
դիկներն ալ կարող ըլլան գտնել անոր  
մէջ , իրենց փրկութեան հարկաւոր  
Ֆղած ամէն միջացները :

Հ . Որո՞նք են այն գլխաւոր մի-  
ջոյները որո՞նք կը գտնուին Սուրբ Ե-  
կեղեցւոյ մէջ և մարդը յաւիտենական  
Փրկութեան կը հասցնեն :

Պ . Մարդը յաւիտենական փրկու-  
թեան հասցնելու համար Եկեղեցւոյ մէջ  
գտնուած գլխաւոր միջոյներն են ,  
ճշմարիտ հաւատաքը , Սուրբ Խորհուրդ-  
ներուն տուած չնորհքը , մեղքերու  
թողութիւն , և հաղորդութիւն Սրբոց :

Հ . Մեղքերու թողութիւն ըսելով  
ի՞նչ կ'իմանաս :

Պ . Մեղքերու թողութիւն ըսելով  
կ'իմանամ թէ Յիսուս Քրիստոս այս  
նպասակաւ իր հաստատած խորհուրդ-  
ներուն միջոցաւ բոլոր մեղքերուն թո-  
ղութիւն տալու իշխանութիւնը առւած  
է Եկեղեցւոյ :

Հ . Հաղորդութիւն Արքոց ըսելով  
ի՞նչ կ'իմանաս :

Պ . Հաղորդութիւն Արքոց ըսելով  
կ'իմանամ թէ բոլոր հաւատացեալները  
մասնակից , հաղորդակից կ'ըլլան Եկե-  
ղեցւոյ մէջ կատարուած ամբողջ ա-  
զօթքներուն և ուրիշ բարի գործ-  
քերուն :

Հ . Հռովմէական Ս . Եկեղեցիէն  
գուրս փրկութիւն կա՞յ :

Պ . Ո՞չ , Հռովմէական Ս . Եկե-  
ղեցիէն գուրս փրկութիւն չիկայ , ին-  
չու որ Քրիստոսի մի միայն ճշմարիտ  
Եկեղեցին այն է :

~~~~~+~~~~~

ԵՐԿՐՈՒԴ ՄԱՍ

ԱՂՋԹՔԻ ՎՐԱՅ

Հ . Աղօթքը ի՞նչ է :

Պ . Աղօթքը՝ մտքի և սրտի դէպ 'ի-
Աստուած վերացում մըն է , զի՞նքը՝
պաշտելու , իրեն չնորհակալ ըլլալու և
մեղի պէտք եղած բաները իրմէն խընդ-
րելու համար :

Հ . Աղօթք ընելը հարկաւո՞ր է :

Պ . Այս՝ աղօթք ընելը հարկաւոր-
է և ստէպ աղօթելու է , ինչու որ
Աստուած այնպէս կը պատուիրէ և մեր
հոգեւոր ու մարմնաւոր բարիքն ալ
այնպէս կը պահանջէ :

Հ . Բանի՞ տեսակ աղօթք կայ :

Պ . Երկու տեսակ աղօթք կայ ,
մտաւորական աղօթք և ձայնաւոր
աղօթք :

Հ . Մտաւորական աղօթքը ո՞րն է :

Պ . Մտաւորականը՝ սոսկ մտքով
եղած աղօթքն է , այս տեսակ աղօթ-
քին մտածական աղօթք ալ կ'ըսուի :

Հ . Զայնաւոր աղօթքը ո՞րն է :

Պ . Զայնաւոր աղօթքը խօսքեորվ

եղած աղօթքն է և այդ խօսքերուն
պէտք է ընկերանան մտքի ուշադրու-
թիւնը և սրտի ջերմեռանդութիւնը :
Յատկապէս աղօթք ըսուածը այս ձայ-
նաւոր աղօթքն է :

Հ . Աղէկ աղօթելու միջոցները
որո՞նք են :

Պ . Աղէկ աղօթելու միջոցներն են .

1 . մտածել որ Սստուծոյ ներկայու-
թեան առջև կը գանուինք և պէտք
ունինք անոր ողորմութեանը . և օգ-
նութեանը : 2 . Դրսանց ալ այնպիսի
կեցուածք մունենալ , որ կը վայելէ
Սստուծոյ անհուն մեծվայելչութեան
առջև ներկայացողի մը .

Հ . Կրնա՞նք յուսալ թէ աղօթքով
Սստուծմէ խնդրած բաներնիս կ'ըն-
դունինք :

Պ . Կրնանք և պարտաւոր ենք յու-
սալ թէ աղօթքով Սստուծմէ խնդրած
բաներնիս կ'ընդունինք միայն թէ մեր
հոգւոյն փրկութեանը վնասակար չը-
լան անոնք :

Հ . Ինչո՞ւ համար պարտաւոր ենք
յուսալու որ Սստուծ մեր աղօթքը
պիտի լոէ և ընդունի :

Պ . Պարտաւոր ենք յուսալու թէ
Սստուծ մեր աղօթքը պիտի լոէ և
պիտի ընդունի , ինչու որ ինքը մեզի
այդպէս խոստացած է , և ինքն ալ ա-
մենակարող , ողորմած և հաւատարիմ
ըլլալուն համար իր խոստումները կը
կատարէ :

Հ . Զայնաւոր աղօթքներու մէջ
ամէնէն գերազանցը ո՞րն է :

Պ . Զայնաւոր աղօթքներու մէջ ա-
մէնէն գերազանցը՝ նոյն ինքն Յիսուս
Քրիստոսի մեզի սորվեցուցած աղօթքն
է , այսինքն Հայր մեր որ յերկինս ես
աղօթքը :

Հ . Հայր մեր որ յերկինս աղօթքը
ի՞նչ կը պարունակէ :

Պ . Հայր մեր որ յերկինս աղօթքը
կը պարունակէ այն ամէն բան զոր
պէտք է յուսանք Սստուծմէ , և այն
ամէն բան զոր պէտք է խնդրենք
իրմէն :

Հ . Հայր մերին մէջ քանի՞ խընդ-
րուածք կայ :

Պ . Հայր մերին մէջ եօթը խընդ-
րուածք կայ . առաջին չորս խնդրուած-

Քով Աստուծմէ կը խնդրենք բարիք .
իսկ վերջի երեք խնդրուածքով իրմէն
կը խնդրենք որ մեղ չարիքէն պահէ
պահպանէ :

Հ . Առաջին չորս խնդրուածքով
Աստուծմէ խնդրուած բարիքները ո-
րո՞նք են :

Պ . Առաջին չորս խնդրուածքով
Աստուծմէ կը խնդրենք , 1 . որ իր ա-
նունը Սուրբ ըլլայ , այսինքն ամէն
մարդիկ իր անունը ճանչնան և պատ-
ռւեն : 2 . որ իր թագաւորութիւնը
գայ , այսինքն Եկեղեցւոյ փառաւոր-
ուելով և տարածուելովը իր թագաւո-
րութիւնն ալ տարածուի . 3 . որ իր
Սուրբ կամքը միշտ և ամէն տեղ կա-
տարուի , 4 . որ մեղի պէտք եղած հո-
գեւոր ու մարմաւոր մնունդը տայ :

Հ . Որո՞նք են այն չարիքներն ո-
րոնցմէ՝ կը խնդրենք որ Աստուծմէն
պահէ , պահպանէ :

Պ . Այն չարիքները՝ որոնցմէ՝ կը
խնդրենք որ Աստուծմէն պահէ , պահ-
պանէ . մեղքեր , փորձութիւններ և մեր
հոգւոյն փրկութեան վնասել կրցողա-

մէն ուրիշ վիշտ կամ թշուառութիւն :

Հ . Հայր մեր էն եաքը ուրիշ ո՞ր
աղօթքն ընելու սովորութիւն ունինք :

Պ . Հայր մերէն եաքը սովորութիւն
ունինք ըսելու Ողոյն յեզ Մարիամ ա-
ղօթքը որով Ամենասուրբ Կուսին օգ-
նութիւնը կը հայցենք :

Հ . Ինչո՞ւ համար Հայր մերէն եաքը
ուրիշ աղօթք մը չենք ըսեր և Ողոյն
յեզը կ'ըսենք :

Պ . Հայր մերէն եաքը Ողոյն յեզ
Մարիամը կ'ըսենք , ինչու որ Ամենա-
սուրբ Կոյսը Յիսուս Քրիստոսի քով
մեր ամէնէն հզօր պաշտպանն է :

Հ . Սուրբերուն բարեխօսութեան
դիմեն ալ օգտակար է :

Պ . Սուրբերուն բարեխօսութեան
դիմեն շատ օգտակար է , ինչու որ
Սուրբերուն աղօթքը Աստուծոյ շատ
հաճելի է :

Հ . Սղօթքի գեղեցիկ եղանակ մը
ցոյց առւր ինծի :

Պ . Սղօթքի գեղեցիկ եղանակը
փարդարակի աղօթքն է , ինչու որ անոր
մէջ կը պարունակուին Հայր մեր , Ողոյն

աղօթքները՝ և թէ՛ մեր կրօնքին ա-
մէնէն կարեւոր խորհուրդներուն մտա-
ծականը :

Հ. Վարդարանը քանի՞ խորհուրդ
ունի :

Պ. Վարդարանին խորհուրդները
տասն և հինգ հատ են . հինգը Ուրա-
խորեան , հինգը Տրտուրեան և հինգն
ալ փառաւորութեան :

Հ. Ուրախութեան խորհուրդներն
որո՞նք են :

Պ. Ուրախութեան հինգ խորհուրդ-
ներն են .

1. Հրեշտակին աւետելը .

2. Ամենասուրբ Կուսին Եղիսաբէթի
այցելութեան երթալը .

3. Յիսուս Քրիստոսի ծնունդը .

4. Յիսուս Քրիստոսին տաճարին
մէջ ընծայումը .

5. Երեք օր կորսուելէն ետքը Յի-
սուս Քրիստոսի տաճարին մէջ նորէն
գտնուիլը :

Հ. Տրտուրութեան խորհուրդները
որո՞նք են .

Պ. Տրտուրութեան հինգ խորհուրդ-
ներն են .

1. Զ. Ժենեայ պարտիզին մէջ Յի-
սուսի քաշած հոգեվարքը :

2. Յիսուսի ձաղկուիլը .

3. Յիսուսի փշով պսակուիլը .

4. Խաչը ուսը առած գողգոթայ
ելլելը .

5. Խաչուիլը և մեռնիլը :

Հ. Փառաւորութեան խորհուրդ-
ներն որո՞նք են :

Պ. Փառաւորութեան հինգ խոր-
հուրդներն են .

1. Յիսուսի Ս. Յարութիւնը .

2. Երկինք համբառնալը .

3. Հոգին Սուրբին առաքելոց
վրայ իջնալը .

4. Ամենասուրբ Կուսին վերափո-
խումը .

5. Ամենասուրբ Կուսին պսակումը
և լոլոր սուրբերուն փառաւորութիւնը :

~~~~~

ՆՐԴՈՐԴԻ ՄՍԱՅ

ԱՍՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՈՒԽԱՆԵՐՈՒՆ ԵՒ-  
ՄԵՂՔԻ ՎՐԱՅ  
\*\*\*

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ

Ա.ԱՏՈՒԾՈՅ ՊԱՏՈՒԽԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ա. — Աստուծոյ պատուխաներուն վրայ  
լինդիանրապէս

Հ. Աստուծոյ պատուխանները  
քանի՞ են :

Պ. Աստուծոյ պատուխանները  
տամն են .

1. Ես եմ քու Տէր Աստուծոյ,  
ինձմէ զատ Աստուծած չունենաս .

2. Աստուծոյ անունը՝ պարապ տեղ  
բրանդ մի՛ առներ .

3. Կիրակի և տօնի օրերը Սուրբ  
պահէ .

4. Հայրդ և մայրդ պատուէ .

5. Մի՛ սպաններ .

6. Մի՛ շնար .

7. Մի՛ գողանար .

8. Ընկերիդ վրայ սուտ վկայու-  
թիւն մի՛ ըներ .

9. Ընկերիդ կնոջը մի՛ ցանկար :

10. Ընկերիդ ունեցածին աչք մի՛  
անկեր :

Հ. Այս պատուխանները ո՞վ  
տուած է :

Պ. Այս պատուխանները հին օրէն-  
քին մէջ Աստուծած ինքնին տուած է  
Մոլսէս Մարգարէին ձեռքով, իսկ Ցի-  
սուս Քրիստոս նոր օրէնքին մէջ զա-  
նոնք հաստատած է :

Հ. Կրչա՞նք պահել այս պատուխ-  
անները :

Պ. Այս', զրնանք այս պատուխ-  
անները պահել Աստուծոյ օգու-  
թեամբը, որ պատրաստ է իր չնորհքը  
տալու ամէնուս ալ երբ պէտք եղածին  
պէս զայն իրմէն խնդրենք :

Հ. Աստուծոյ պատուխանները պա-  
հելու պարտաւոր ենք :

Պ. Այս', Աստուծոյ պատուխան-  
ները պահելու պարտաւոր ենք, անանկ  
որ անոնցմէ միայն մէկ հատին դէմ  
ծանրապէս մեղանչելն ալ բաւական է  
մեղ դժոխք տանելու :

Հ . Այս պատուիրանները ի՞նչ կը  
պարունակեն :

Պ . Այս պատուիրանները կը պարու-  
նակեն՝ Ասոււծոյ և մեր ընկերին հան-  
դէպ ունեցած մեր պարտականութիւն-  
ները :

Հ . Ասոււծոյ և մեր ընկերին հան-  
դէպ մեր ունեցած պարտականութիւն-  
ները որո՞նք են :

Պ . Ասոււծոյ հանդէպ ունեցած մեր  
պարտականութիւնն է զինքը ամէն  
բանէ վեր և զոլոր սրտանց սիրել, իսկ  
մեր ընկերին հանդէպ ունեցած մեր  
պարտականութիւնն է՝ Ասոււծոյ սի-  
րոյն համար մեր ընկերները մեր անձին  
պէս սիրել :

Հ . Այս տասը պատուիրաններուն  
մէջ Ասոււծած ընդհանուր կերպով ի՞նչ  
կը հրամայէ մեզի :

Պ . Այս տասը պատուիրաններուն  
մէջ Ասոււծած ընդհանուր կերպով կը  
հրամայէ մեզի բարին ընել և չարէն  
ետ կենալ, Բայց ամէն պատուիրան կը  
պարունակէ 1. պատուէր մը. 2. Ար-  
գելք մը :

Բ . Ասոււծոյ պատուիրաններուն վրայ  
մասնաւորապէս

Հ . Ասոււծած իր առաջին պատուի-  
րանին մէջ մեզի՝ ինձմէ զատ Ասոււծած  
յունենաս, ըսելով ի՞նչ կը պատուիրէ :

Պ . Ասոււծած իր առաջին պատուի-  
րանին մէջ ինձմէ զատ Ասոււծած յունե-  
նաս ըսելով կը պատուիրէ մեղի որ  
պէտք է միայն զինքը մեր գերազոյն  
Տէրը ճանչնանք, սիրենք, իրեն միայն  
երկրպագութիւն ընենք և ծառայենք :

Հ . Առաջին պատուիրանը ի՞նչ  
կ'արգիլէ մեղի :

Պ . Առաջին պատուիրանը կ'արգիլէ  
մեղի կուապաշտութիւնը, աւելորդապաշ-  
տութիւնը, արբապղծութիւնը, հաւատքի  
վերաբերեալ ձևաբանութիւններուն յան-  
ցապարտ զիտութիւնը և կրօնքի դէմ  
ո՛ և է մեղք :

Հ . Արգեօք սուրբերը և հրեշտակ-  
ները կրնա՞նք պատուել առանց այս  
պատուիրանին դէմ մեղանչած ըլլալու :

Պ . Ա՛յս, առանց այս պատուիրա-  
նին դէմ մեղանչած ըլլալու կրնա՞նք  
պատուել հրեշտակները և սուրբերը,

մանաւանդ թէ պարտական ալ ենք  
պատուելու , ինչու որ անոնք Աստու-  
ծոյ բարեկամները և Անոր քով մեր  
բարեխօներն են :

Հ . Յիսուս Քրիստոսի , Ամենասուրբ  
Կուսին և ուրիշ սուրբերուն պատկեր-  
ներն ալ յարգելու պարտակա՞ն ենք :

Պ . Սյո' , անտարակոյս պէտք է որ  
Յիսուս Քրիստոսի , Ամենասուրբ Կու-  
սին և Սուրբերուն պատկերներն յար-  
գենք , ինչու որ այս պատկերներուն  
եղած յարգանքը ուզդակի կերթայ  
Յիսուս Քրիստոսի , Ամենասուրբ Կու-  
սին և Սուրբերուն :

Հ . Բայց սուրբերուն մասունքները  
ինչո՞ւ համար կը յարգենք :

Պ . Սուրբերուն մասունքները անոր  
համար կը յարգենք որ անոնց մարմին-  
ները Յիսուս Քրիստոսի կենտանի ան-  
դամները և Հոգին Սուրբին տաճար-  
ները եղան , և օր մը յաւիտենական  
կեանքի համար փառաւորեալ կերպով  
յարութիւն պիտի առնեն :

Հ . Աստուած իր Երկրորդ պատուի-  
քանին մէջ՝ Աստուծոյ անունը պարապ

տեղ բերանոյ մի՛ առնեցր ըսելով ի՞նչ  
կ'օրգիլէ մեղի :

Պ . Աստուած իր Երկրորդ պատուի-  
քանին մէջ՝ Աստուծոյ անունը պարապ  
տեղ բերանոյ մի՛ առնեցր ըսելով կ'ար-  
գիլէ մեղի 1 . առանց յարգութեան  
Աստուծոյ անունը յիշել , 2 . սուտ տեղ ,  
կամ առանց հարկաւորութեան կամ  
թէ ո՛ր և է կերպով ապօրէն Երդում  
ընել , 3 . Աստուծոյ , Ամենասուրբ Կու-  
սին և սուրբերուն գէմ հայնոյել :

Հ . Երկրորդ պատուիրանը ի՞նչ կը  
պատուիրէ մեղի .

Պ . Երկրորդ պատուիրանը կը պատ-  
ուիրէ մեղի յարգել Աստուծոյ սուրբ  
անունը և կարելի մեր ուխտերը ու-  
երգումները :

Հ . Աստուած Երրորդ պատուի-  
քանին մէջ՝ կիրակի եւ օնի օրերը սուրբ  
պահէ ըսելով ի՞նչ կը պատուիրէ մեղի :

Պ . Աստուած իր Երրորդ պատուի-  
քանին մէջ՝ կիրակի եւ օնի օրերը սուրբ  
պահէ ըսելով կը պատուիրէ մեղի որ  
իրեն նույնիրուած օրերուն մէջ քրիս-  
տոնէական բարեպաշտ գործքերավ զի՞նք  
պատուենք :

Հ . Երրորդ պատուիրանը ի՞նչ կարգիլէ մեզի :

Պ . Երրորդ պատուիրանը կ'արգիլէ մեզի Աստուծոյ նուիրուած օրերուն մէջ ծառայական զործ տեսնելը :

Հ . Ծառայական զործ ըսելով ի՞նչ կ'իմանսս :

Պ . Ծառայական զործ ըսելով կիմանսմ այն մարմնաւոր աշխատութիւնները որոնք յատուկ են ծառաներու, արհեստաւորներու և բանուորներու :

Հ . Աստուծոյ նուիրուած օրերը թոյլ արուած ծառայական գործք բնաւչկայ :

Պ . Թոյլ արուած են այն գործքերը որոնք հարկաւոր են կեանքի և կամ Աստուծոյ պաշտոնին համար : Նմանապէս երբեմն ծանր պատճառ մը կը գանուի գործելու համար, այն ատեն, եթէ կարելի է, իբ ժողովրդապետէն հրաման առնելով կատարուած ծառայական գործքերն ալ թոյլ արուած են :

Հ . Աստուած իր չորրորդ պատուիրանին մէջ՝ հայրդ եւ մայրդ պատուեսելով ի՞նչ կը պատուիրէ մեզի :

Պ . Աստուած իր չորրորդ պատուիրանին մէջ՝ հայրդ եւ մայրդ պատուեսելով կը պատուիրէ մեզի յարգել մերհայրն ու մայրը, մեղք չեղած ամէնց բանի մէջ իրենց հնագանդել և մնանց հոգեւոր և մարմնաւոր կարօտութեանատեն իրենց օգնել :

Հ . Չորրորդ պատուիրանը ի՞չ կ'արգիլէ մեզի :

Պ . Չորրորդ պատուիրանը կ'արգիլէ մեզի վշտացնել մեր ծնողքը խօսքով, գործքով կամ ուրիշ ո՛ր և է եղանակով :

Հ . Չորրորդ պատուիրանին մէջ հայր և մայր ըսելով դեռ ուրիշ որո՞նք կը հասկցուին :

Պ . Չորրորդ պատուիրանին մէջ հայր և մայր ըսելով կը հասկցուին մեր ամբողջ մեծաւորները թէ՛ հոգեւոր և թէ մարմնաւոր, հետեւաբարձանոնց ալ հնագանդութիւն և յարգանք կը պարտինք :

Հ . Աստուած իր հինգերորդ պատուիրանին մէջ՝ մի՛ ապանելեր ըսելով ի՞նչ կ'արգիլէ մեզի :

Պ . Աստուած իր հինգերորդ պատ-

ուիրանին մէջ մի՛ սպաններ ըսելով  
կ'արգիլէ մեղի մեր ընկերը մեռյնել,  
ծեծել, վիրաւորել և ուրիշ ո՛ և է վնաս  
հասցնել անոր մարմնոյն՝ անձամբ կամ  
ուրիշի ձեռքբոլ։ Նմանապէս Աստուած  
կ'արգիլէ նախատական խօսքերով ըն-  
կերը վշտացնել, անոր չարիք բաղձալ  
և զինք գայթակղեցնել ընկերին հոդին  
մեռյնել ըսել է։ Այս պատուիրանը  
կ'արգիլէ նաև անձնասպանութիւնը այ-  
սինքն ինքզինքը մեռյնելը։

Հ. Հինգո՞ւ համար Աստուած հինգե-  
րորդ պատուիրանով անձնասպանու-  
թիւնը կ'արգիլէ։

Պ. Հինգերորդ պատուիրանով Աստ-  
ուած անձնասպանութիւնը կ'արգիլէ,  
ինչու որ մարդը ինք իր կեանքին տէրը  
չէ, ինչպէս որ ուրիշներուն կեանքին  
ալ տէր չէ։ Այս պատճառաւ Եկեղե-  
ցին՝ անձնասպան եղող մարդը կը  
պատճէ, զինքը Եկեղեցական թաղումէ  
զրկելով։

Հ. Հինգերորդ պատուիրանը ի՞նչ  
կը պատուիրէ մեղի։

Պ. Հինգերորդ պատուիրանը կը

պատուիրէ մեղի որ մեր թշնամիներուն  
ներենք և ամէն մարդու բարիք ուղենք։

Հ. Աստուած վեցերորդ պատուի-  
րանին մէջ՝ մի՛ զնար ըսելով ի՞նչ կ'ար-  
գիլէ մեղի։

Պ. Աստուած վեցերորդ պատուի-  
րանին մէջ՝ մի՛ զնար ըսելով կ'արգիլէ  
մեղի մաքրութեան և ողջախոնութեան  
հակառակ եղող ամէն գործք, ամէն  
նայուածք և ամէն խօսք։

Հ. Վեցերորդ պատուիրանը ի՞նչ կը  
հրամայէ մեղի։

Պ. Վեցերորդ պատուիրանը կը պատ-  
ուիրէ մեղի՝ մեր գործքերուն, նայ-  
ուածքներուն, խօսքերուն, շարժու-  
ձեւին և հագուստին մէջ ողջախոն,  
մաքուր և համեստ ըլլալ։

Հ. Աստուած եօթներորդ պատուի-  
րանին մէջ՝ մի՛ զողնար ըսելով ի՞նչ  
կ'արգիլէ մեղի։

Պ. Աստուած եօթներորդ պատուի-  
րանին մէջ՝ մի՛ զողնար ըսելով կ'ար-  
գիլէ մեղի՝ ընկերին վերաբերած մէկ  
բանը անիրաւութեամբ առնել և կամ  
պահելը։ Նմանապէս կ'արգիլէ ո՛ր և

լցէ կերպով, օրինակիր համար, վաշ-  
խառութեամբ, խարդախութեամբ, խա-  
բերայութիւններով կամ ուրիշ ասոնց  
նման բաներով մեր ընկերին վաստ  
հասցնելը:

Հ. Եօթներորդ պատուիրանը մեզի  
ի՞նչ կը պատուիրէ:

Պ. Եօթներորդ պատուիրանը մեզի  
կը պատուիրէ՝ ուրիշնն վերաբերած  
բանը իրեն դարձնել, անիրաւութեամբ  
ընկերին արուած վաստ դարմանել և  
մեր պարտքերը վճարել:

Հ. Ասուուած ութերորդ պատուի-  
րանին մէջ՝ ընկերիդ վրայ առա վկայու-  
թիւն մի՛ ընեւր ըսելով կ'արգիլէ մեզի  
մեզի:

Պ. Ասուուած ութերորդ պատուի-  
րանին մէջ՝ ընկերիդ վրայ առա վկայու-  
թիւն մի՛ ընեւր ըսելով կ'արգիլէ մեզի  
դաստարաններու առջև առա վկայու-  
թիւն չընելը: Նմանապէս կ'արգիլէ  
մեզի զրապարտութիւնը, բամբասանքը,  
չողքորժութիւնը, յանդուզն դասու-  
զութիւնը կամ կասկածը և ամէն տե-  
սակ ստախօսութիւնները:

Հ. Ութերորդ պատուիրանը ի՞նչ կը  
պատուիրէ մեզի:

Պ. Ութերորդ պատուիրանը կը պատ-  
ուիրէ մեզի՝ ձշմարտութիւնը ըսել: իր  
ատենին և իր աեղը, և որչափ կարելի  
է, մեր ընկերին ըրածին և ըսածին  
աղէկ մեկնութիւն տալ:

Հ. Ասուուած իններորդ պատուի-  
րանին մէջ՝ ընկերիդ կնոջը մի ցանկար  
ըսելով ի՞նչ կ'արգիլէ մեզի:

Պ. Ասուուած իններորդ պատուի-  
րանին մէջ՝ ընկերիդ կնոջը ընկար  
ըսելով կ'արգիլէ մեզի՝ մաքրութեան  
և սրբութեան գէմ եղած գէմ բաղ-  
ձանքները և ամէն տեսակ ներքին  
մեղքերը:

Հ. Իններորդ պատուիրանը ի՞նչ կը  
պատուիրէ մեզի:

Պ. Իններորդ պատուիրանը կը պատ-  
ուիրէ մեզի նոյն խոկ ներքուստ ալ  
մաքրուր և ողջալիսն ըլլալ:

Հ. Ասուուած տասներորդ պատուի-  
րանին մէջ՝ ընկերիդ ունեցածին այժ մի  
չնկեր ըսելով՝ ինչ կ'արգիլէ մեզի:

Պ. Ասուուած տասներորդ պատուի-

բանին մէջ՝ զնկերիդ ունեցածին այժ միտ սեկեր ըսելով կ'արգիլէ մեղի՝ մեր ընտկերը իր ունեցածէն զրկելու բաղձանքը :

Հ. Տամներորդ պատուիրանը ի՞նչ կը պատուիրէ մեղի :

Պ. Տամներորդ պատուիրանը մեղի կը պատուիրէ գոհ ըլլալ այն վիճակէն ուր դրած է մեղ Աստուած, և աղջառութիւնը համբերութեամբ քաշել եթէ Աստուած այնպէս ուզեր է :



### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵԿԵՂԵՅԻՈՅ ՊՈՏՈՒԽՐԱՆՆԵՐՈՒՆ Վ.Բ.Ա.Ց.

Հ. Եկեղեցւոյ գլխաւոր պատուիրանները քանի՞ են :

Պ. Եկեղեցւոյ գլխաւոր պատուիրանները հինգ են և ասոնք են .

1. Կիրակի և տօնի օրերը պատարագ տեսնել .

2. Մեծ պահքին մէջ և ուրիշ հրամայուած օրերը պահք և ծոմ պահել .

3. Գոնէ տարին մէկ անգամ խոս-

տովանիլ և Զատկին հաղորդուիլ Հայկաթողիկէներու եկեղեցիներէն միոյն մէջ :

4. Ունեցածին տասնորդը Եկեղեցւոյ տալ, ըստ սովորութեան :

5. Արգիլուած ժամանակները հարսնիք չնել :

Հ. Եկեղեցին մեր վրայ պատուիրաններ գնելու իշխանութիւնը ո՞ւսկից առած է :

Պ. Եկեղեցին մեր վրայ պատուիրաններ գնելու իշխանութիւնը թիսում Քրիստոսէն առած է, անանկ որ Եկեղեցիին չհնազանդողը նոյն ինքն Աստուծոյ անհնազանդ գտնուած կ'ըլլայ :

Հ. Եկեղեցին իր առաջին պատուիրանին մէջ՝ կիրակի եւ տօնի օրերը իպաշտագ տեսնել ըսելով մեղի ի՞նչ կը հրամայէ :

Պ. Եկեղեցին իր առաջին պատուիրանին մէջ՝ կիրակի եւ տօնի օրերը պաշտագ տեսնել ըսելով կը հրամայէ մեղի՝ ամէն կիրակի օր և Եկեղեցւոյ պատուիրած ամէն հրամայեալ տօնի օր ջերմեռանդութեամբ սուրբ պատարագիներկայ գտնուիլ :

Հ. Եկեղեցին իր երկրորդ պատուիրամին մէջ՝ մեծ պահին մէջ ծովապահել ըսելով մեղի ի՞նչ կը հրամայէ :

Պ. Եկեղեցին իր երկրորդ պատուիրամին մէջ՝ մեծ պահին մէջ ծով պահել ըսելով կը հրամայէ մեղի Մեծ Պահոց մէջ Եկեղեցւոյ սահմանած օրերը ծոմ պահել :

Հ. Ո՞վ կը պարտաւորի ծոմ պահելու :

Պ. Ծոմ պահելու կը պարտաւորին՝ իրենց կենաց քսան և մէկերորդ աարին լրացնող ամէն քրիստոնեայք, որոնք տնօրինուած չեն և կամ ծոմ չպահելու օրինաւոր պատճառ մը չունին :

Հ. Լատինաց համար հրամայուած ծոմի օրերն որո՞նք են :

Պ. Լատինաց համար հրամայուած ծոմի օրերն են. Մեծ Պահքը, Յիսուս կաց ինչ ինչ օրերը, Չորս եղանակներու ծոմը, և ինչ ինչ տօներուն նախընթաց օրերը :

Հ. Եկեղեցին իր երկրորդ պատուիրամին մէջ՝ Մեծ Պահին մէջ եւ ուրիշ հրամայուած օրերը . . . պահի պահել ըսելով մեղի ի՞նչ կը հրամայէ :

Պ. Եկեղեցին երկրորդ պատուիրամին մէջ՝ Մեծ Պահին մէջ եւ ուրիշ հրամայուած օրերը . . . պահք պահել ըսելով մեղի կը հրամայէ Զորեքշաբթի և Աւրբաթ օրերը, ամբողջ մեծ պահքը, և ուրիշ հրամայուած շաբաթական պահքերը պահել այսինքն մոէ, հաւկթէ ու կաթնեղենէ եա կենալ եթէ չեն տնօրինուած, իսկ եթէ անօրինուած են, պէտք է ճշդիւ հետեւիլ անօրինուածին տրամադրութիւններուն :

Հ. Ի՞սո՞ւ համար Եկեղեցին պահքի և ծոմի պարտաւորութիւնը դրած է :

Պ. Եկեղեցին պահքի և ծոմի պարտաւորութիւնը դրած է, որպէս զի օգնէ մեղի՝ մեղքերնուա վրայ ապաշխարելու, կիրքերնիս յաղթելու, և Աստուծոյ չորսքները ձեռք բերելու համար :

Հ. Եկեղեցին իր երրորդ պատուիրամին մէջ՝ զոնէ տարին մեկ անգամ խոստվանիլ ըսելով մեղի ի՞նչ կը հրամայէ :

Պ. Եկեղեցին իր երրորդ պատուիրամին մէջ՝ զոնէ տարին մեկ անգամ խոստվանիլ ըսելով կը պատուիրէ բա-

Նավարութեան տարիքը համառող ամէն՝  
քրիստոնէի որ գոնէ տարին մէկ ան-  
գամ ապաշխարութեան խորհուրդին  
մօտենայ :

Հ . Ի՞նչո՞ւ համար Եկեղեցին կ'ըսէ-  
որ զոնէ տարին մեկ անգամ խոսսու-  
վանինք :

Պ . Եկեղեցին զոնէ տարին մեկ ան-  
գամ բաելով կ'ուղէ մեզի յայտնել թէ-  
ինք կը բաղձայ որ տարին շատ անդամ  
խորհուրդներուն մօտենանք :

Հ . Եկեղեցին իր երրորդ պատուիւ-  
րանին մէջ՝ զոնէ տարին մեկ անգամ . . .  
Զատիկն հաղորդուիլ բաելով մեզի ի՞նչ  
կը հրամայէ :

Պ . Եկեղեցին իր երրորդ պատուիւ-  
րանին մէջ՝ զոնէ տարին մեկ անգամ . . .  
Զատիկն հաղորդուիլ բաելով կը պարտա-  
ւորէ չափահասութեան տարիքը հաս-  
նող ամէն քրիստոնէայ որ ամէն տարի  
Զատիկի միջոցին մէջ Սուրբ Հաղոր-  
դութիւն առնէ :

Հ . Ի՞նչպէս կը պահուի Եկեղեցւոյ  
որրորդ պատուիրանը որ կ'ըսէ ունե-  
ցածին տամորդը Եկեղեցւոյ տալ ըս-  
տովորութեան :

Պ . Եկեղեցւոյ չորրորդ պատուիւ-  
րանը կը պահուի վճարելով ա'յն նուեր-  
ները որոնք հաստատուած են Եկեղեց-  
ւոյ կողմանէ , Աստուծոյ ամէն բանի  
վրայ գերագոյն իշխանութիւն ունե-  
նալը ճանչնալու և Անոր պաշտօնեամնե-  
րուն վայելուչ կերպով ապրելու օդնելու  
համար :

Հ . Եկեղեցին իր հինգերորդ պատ-  
ուիրանին մէջ՝ Արդիշուած ժամանակ-  
ները հարամիլ յլնել բաելով մեզի ի՞նչ  
կը հրամայէ :

Պ . Եկեղեցին իր հինգերորդ պատ-  
ուիրանին մէջ՝ Արդիշուած ժամանակ-  
ները հարամիլ յլնել բաելով կը հրամայէ  
մեզի որ Եկեղեցւոյ սահմանած ինչ ինչ  
ժամանակները հանդիսաւոր հարսնիք  
շնենք :

\*\*\*\*\*

### ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

#### ՄԵՂՔԻ ՎՐԱՅ

Հ . Մեղքը ի՞նչ է :

Պ . Մեղքը՝ կամաւոր կերպով Աս-  
տուծոյ օքէնքը չպահեն է :

Հ . Քանի՞ տեսակ մեղք կայ :

Պ . Երկու տեսակ մեղք կայ . սկզբան մեղք և ներգործական մեղք :

Հ . Սկզբնական մեղքը ի՞նչ է :

Պ . Սկզբնական մեղքը այն մեղքն է որուն մէջ կը ճնինք ամէնքնիս , և այդ մեղքը մեր նախահայրը Ադամէնի բրեւ ժառանգութիւն մեղի կ'անցնի :

Հ . Սկզբնական մեղքէն բոլորվին աղատ եղող բնաւ արարած մը չգետնուեցա՞ւ :

Պ . Միմիայն Ամենասուրբ Կոյսը՝ իր աստուծային Որդին Յիսուս Քրիստոսի արդիւնքներուն չնորհիւ և մասնաւոր առանձնաշնորհութեամբ մը՝ սկզբնական մեղքէն բոլորվին աղատ մնաց : Ասոր համար է որ իրեն Անարատ Կոյս կ'ըսենք :

Հ . Ներգործական մեղքը ո՞րն է :

Պ . Ներգործական մեղքը՝ ներահաս ըլլալէն ետքը մեր իսկ գործած մեղքն է :

Հ . Ներգործական մեղքը քանի՞ տեսակ է :

Պ . Ներգործական մեղքը երկու տե-

սակ է . ներելի մեղք , մահուչափ մեղք :

Հ . Մահուչափ մեղքը՝ ո՞րն է :

Պ . Մահուչափ մեղքը՝ ծանր նիւթի մը մէջ՝ կատարելապէս ճանչնալով և կատարեալ հաւանութիւնով՝ Աստուծոյ օրէնքը բանարարելն է :

Հ . Ինչո՞ւ համար այս մեղքը մահուչափ կ'ըսուի :

Պ . Ծանր մեղքը մահուչափ կ'ըսուի , ինչու որ հոգին կը մեռցնէ այսինքն այս մեղքը մարդուս հոգին կը զրկէ Աստուծոյ չնորքէն , որ անոր գերբնաւ կան կեանքն է և մարդը արժանի կ'ընէ դժոխքին :

Հ . Մահուչափ մեղքը մարդուս հոգւոյն դեռ ուրիշ ի՞նչ չարիք կը պատճառէ :

Պ . Մահուչափ մեղքը՝ մարդուս նախապէս ստացած արդիւնքները կորալինցնել կուտայ և կամ անոնց արժանիքը առկախ կը ձգէ : Մահուչափ մեղք գործող մարդը յաւիտենական կեանքի համար արդիւնաւոր գործք մը չի կըրնար գործել և առաջինէն աւելի դէպի չարը յօժարութիւն կըզգայ :

Հ. Մահուչափ մեղքով Աստուծոյ չնորհքը կորսնցնող մարդը այլ եւս զայն չի կրնա՞ր գանել :

Պ. Մահուչափ մեղքով Աստուծոյ չնորհքը կորսնցնող մարդը կրնայ զայն նորդն գանել ապաշխարութեան խորհուրդին միջոցաւ, կամ կատարեալ զզջման ներգործութիւնով մը, և այս վերջն պարագային, պէտք է որ գեթ կարելի եղածին չափ չուտ խօսավանանք ըլլալու լոելեայն դիտաւորութիւն ունենայ :

Հ. Ներելի մեղքը ո՞րն է :

Պ. Ներելի մեղքը այն մեղքն է որ թէս մեղ Աստուծոյ չնորհքէն չի զրկեր, սակայն սիրոյ եռանդը կը պակսեցնէ մեր մէջը, միշտ մահուչափ մեղքի կը արամադրէ և մեղ թէ այս աշխարհքիս վրայ և թէ անդիի աշխարհքը՝ ժամանակաւոր պատիմներու արժանի կ'ընէ :

Հ. Այս մեղքը ինչո՞ւ ներելի կ'ըսուի :

Պ. Այս մեղքը ներելի կ'ըսուի, ինչու որ թեթէ յանցանք մը ըլլալուն համար՝ դիւրութեամբ կրնայ թողութիւն գանել Աստուծմէ :

Հ. Քանի՞ կերպով կրնայ մէկը մեղանչել :

Պ. Զորս կերպով կրնայ մէկը մեղանչել, խորհրդով, գործքով, խօսքով և զանցառութիւնով :

Հ. Ի՞նչպէս կը մեղանչէ մէկը խորհրդով, խօսքով և գործքով :

Պ. Մէկը խորհրդով, խօսքով և գործքով կը մեղանչէ երբ՝ կատարեալ հաւանութեամբ՝ արգիլուած բանի մը վրայ հաճոյքով կը մտածէ, անոր կը բազայ, անոր վրայ կը խօսի կամ զայն գործքով կը կատարէ :

Հ. Ի՞նչպէս կը մեղանչէ մէկը զանցառութիւնով :

Պ. Զանցառութիւնով կը մեղանչէ մէկը երբ՝ հրամայուած բան մը կամաւոր կերպով զանց կ'ընէ :

Հ. Գլխաւոր մեղքերը քանի՞ հատ են :

Պ. Գլխաւոր մեղքերը եօթը հատ են. 1. Հպարառութիւն, 2. Ագահութիւն, 3. Բղջախոսութիւն, 4. Կամանձ, 5. որկրամոլութիւն, 6. բարկութիւն, 7. ծուլութիւն :

Հ. Այս մեղքերը ինչո՞ւ համար զիհաւոր կ'ըսուին :

Պ. Այս մեղքերը կամ՝ մոլութիւնն ները զիսաւոր կ'ըսութին, ինչու որ մէւ կալ ամէն մեղքերուն և մոլութիւններուն աղքիւրն են :

Հ. Հոգին Սուրբին դէմ եղած մեղքերը քանի՞ հատ են :

Պ. Հոգին Սուրբին դէմ եղած մեղքերին վեց հատ են. 1. Իր փրկութենէն, յուսանատիլ, 2. Կարծել որ առանց արդիւնքի կրնայ փրկուիլ, 3. Ճանչցուած ճշմարտութեան դէմ պատերազմիլ, 4. Ուրիշի չնորհքին և բարութեանը նախանձիլ, 5. Մեղքի մէջ յամառիլ, 6. Վախճանական անզզջութեան մէջ մեռնիլ :

Հ. Մեղ ամենէն աւելի մեղքէ հեռի պահող մտածութիւնը ո՞րն է :

Պ. Մեղ ամէնէն աւելի մեղքէ հեռի պահող մտածութիւնը վերջինիներու մտածութիւնն է, այսինքն մեր գլուխը գալիք վերջին բաներուն վրայ մտածելն է :

Հ. Մարդուս համար այս վերջինքը քանի՞ հատ են :

Պ. Մարդուս համար այս վերջինից

չորս հատ են ման, դատաստան, դժոխք և արքայութիւն :

### ԶՈՐՅՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ

ԽՈՐՅՈՒԹԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽՈՐՅՈՒԹԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Քանի՞ խորհուրդ կայ :

Պ. Եօթը խորհուրդ կայ. Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Սպաշտարութիւն, Վերջին Օծումն, Կարգ և Պատկ :

Հ. Խորհուրդ ըսելով ի՞նչ կը հասկնամ :

Պ. Խորհուրդ ըսելով կը հասկնամ. Յիսուս Քրիստոսէն հաստատուած ազգութու և զգալի նշան մը որ մեր հոգիները սրբացնելու չնորհք կուտայ :

Հ. Ինչո՞ւ համար կ'ըսեն թէ խորհուրդը ազդու եւ զգալի նշան մըն և որ շնորհի կուտայ :

Պ. Որովհետեւ բոլոր խորհուրդներն

ալ զգալի իրերու միջոցաւ մեր հոգին  
ներուն մէջ յառաջ եկող աստուածային  
չնորհքները կը նշանակեն :

Հ. Խորհուրդները ի՞նչպէս կը սրբացնեն զմեզ :

Պ. Խորհուրդները զմեզ կը սրբացնեն  
տալով մեզի կամ աւելցնելով Աստու-  
ծոյ չնորհքները որոնցմով կ'ըլլանք  
սուրբ . Աստուծոյ համելի , Անոր սր-  
բեգիրները և իր արքայութեան ժա-  
ռանգորդներ :

Հ. Խորհուրդներուն զմեզ սրբացնե-  
լու ոյժը ո՞վ առւած է :

Պ. Խորհուրդներուն զմեզ սրբացը-  
նելու ոյժը Յիսուս Քրիստոս առւած է  
իր չարչարանքներով և իր մահուամբը :

Հ. Որո՞նք են այն խորհուրդները  
որ մեզի չնորհք տալով զմեզ կը սրբա-  
ցընեն և Աստուծոյ բարեկամ կ'ընեն :

Պ. Մեզի չնորհք տալով սրբացնող ,  
զմեզ Աստուծոյ թշնամութենէն ազա-  
տելով Անոր բարեկամ ընող խորհուրդ-  
ները երկու հատ են . Մկրտութիւն և  
Ապաշխարութիւն : Այս երկուքը մեռ-  
եալներու խորհուրդ ալ կ'ըսուին , ին-

չու որ կը վերցնեն , կ'անհետացնեն  
մահուչափ մեզքը որ մեր հոգւոյն  
մահն է :

Հ. Որո՞նք են այն խորհուրդները  
որ զմեզ կը սրբացնեն Աստուծոյ չնորհ-  
քը մեր մէջ չարցնելով :

Պ. Շնորհքը շատցնելով զմեզ սրբա-  
ցընող խորհուրդները հինգ հատ են .  
Դրոշմ , Հազարդութիւն , վերջն Օծում ,  
Կարգ և Պատկ : Այս հինգը՝ կենդանի-  
ներու խորհուրդներ ալ կ'ըսուին , ին-  
չու որ ասոնք ընդունող մարդը պէտք  
է արդէն չնորհաց կեանքքը ունենայ ,  
չնորհքով ապրի , այսինքն ո' և է մա-  
հուչափ մեզքէ ազատ ըլլայ :

Հ. Ի՞նչ մեզք կը գործէ անիկա՝ որ  
գիտնալով թէ ինք չնորհաց վիճակի  
մէջ չէ , սակայն կը յանդգնի այս կեն-  
դանիներու խորհուրդներէն մէկուն  
մօտենալու :

Պ. Անիկա որ գիտնալով թէ ինք  
չնորհաց վիճակի մէջ չէ , սակայն կը  
յանդգնի կենդանիներու խորհուրդնե-  
րէն մէկուն մօտենալու , ծանր սրբա-  
պլղծութեան մեզք կը գործէ :

Հ. Մեր փրկութեան համար ամէն նէն հարկաւոր խորհուրդները ո՞րոնք են :

Պ. Մեր փրկութեան համար ամէն աւելի հարկաւոր խորհուրդները կրկն են. Մկրտութիւն և Ապաշխառութիւն : Մկրտութիւնը բացարձակապէս ամէն մարդու հարկաւոր է, իսկ Ապաշխառութիւնը հարկաւոր է անոնց որ Մկրտութենէն ետքը մահուչափ մեղք գործեր են :

Հ. Որո՞նք են այն խորհուրդները որ մէկ անգամ միայն կրնան ընդունուիլ :

Պ. Երեք խորհուրդ կայ որոնք մէկ անգամ միայն կրնան ընդունուիլ. Մկրտութիւն, Դրոշմև կարգ : Ասոնցմէ ամէն մէկը կնիք մը կը դրոշմէ մարդուն հոգւոյն :

Հ. Այս երեք խորհուրդներուն մարդուս հոգւոյն դրոշմած կնիքն ի՞նչ է :

Պ. Այս երեք խորհուրդներուն մարդուս հոգւոյն դրոշմած կնիքը հոգեւոր նշան մըն է որ ա'յլեւս անգամ մըն ալ չի չնջուիր :

Հ. Այս երեք խորհուրդներով մարդուս հոգւոյն վրայ դրոշմուած կնիքը ի՞նչ բանի կը ծառայէ :

Պ. Այս երեք խորհուրդներով մարդուս հոգւոյն դրոշմուած կնիքը կը ծառայէ անոր որ Մկրտութեան կնիքով կը Յիսուս Քրիստոսի անդամ կը նշանակուինք, Դրոշմով Անոր զինուորները կ'ըլլանք, իսկ Կարգի խորհուրդով Անոր պաշտօնեաները կը կարգուինք :

Հ. Խորհուրդ մը կատարելու համար քանի բան պէտք է :

Պ. Խորհուրդ մը կատարելու համար երեք բան պէտք է. Այսիք, ձեւ և պաշօնեայ որ պէտք է եկեղեցեոյ ըրածն ընելու դիտաւորութիւն ունենայ :

Հ. Խորհուրդի նիւթը ի՞նչ է :

Պ. Խորհուրդի մը նիւթը՝ այդ խորհուրդը կատարելու համար գործածուած զգալի իրն է, զորօքինակ մկըրտութեան մէջ բնական ջուրը և Դրոշմի մէջ ալ բալասանով խառնուած իւղը :

Հ. Խորհուրդի ձեւն ի՞նչ է :

Պ. Խորհուրդի մը ձեւը՝ այդ խորհուրդը կատարելու ժամանակ արաւասանուած խօսքերն են :

Հ . Խորհուրդի պաշտօնեայն ո՞վ է :

Պ . Խորհուրդի մը պաշտօնեան՝ այդ-  
խորհուրդը կատարող կամ մատակարա-  
րող անձն է :

\*\*\*\*\*

Գլուխ Բ.

ՄԿՐՏԱՒԹԵԱՆ Վ.ԲԱՅ

Հ . Մկրտութիւնն ի՞նչ է :

Պ . Մկրտութիւնը խորհուրդ մըն է  
որուն միջոցաւ Աստուծոյ չնորհքավ  
կրկն կը ծնանինք և քրիստոնեայ կ'ըլ-  
լանք :

Հ . Մկրտութեան խորհուրդին գործ-  
քերը որպէսնք են :

Պ . Մկրտութեան խորհուրդս սկզբա-  
նական մեղքը կը չնշէ . կը չնշէ նաև  
ներգործական մեղքը եթէ գտնուի .  
այս մեղքերուն համար մարդուն պար-  
տական եղած պատիժը կը ներէ , Յի-  
սուս Քրիստոսի անդամ ըլլալու կնիքը  
կը դրամէ , մեղ Աստուծոյ և Եկեղեցւոյ  
որդի և արքայութեան ժառանգորդ-

կ'ընէ և մէկալ խորհուրդներն ընդու-  
նելու ընդունակութիւն կու տայ :

Հ . Մկրտութեան սովորական պաշ-  
տօնեան ո՞վ է :

Պ . Մկրտութեան սովորական պաշ-  
տօնեան քահանան է , մանաւանդ հոգ-  
հոգւոց ունեցող քահանան է :

Հ . Հարկաւորութեան ատեն ո՞վ  
կրնայ մկրտել :

Պ . Հարկաւորութեան ատեն ամէն  
մարդ կրնայ մկրտել , էրիկ մարդ , կին ,  
նոյն իսկ հերետիկոս և անհաւասն ալ :

Հ . Մկրտութիւնն ի՞նչպէս կը արուի :

Պ . Մկրտութիւնը կը արուի՝ երա-  
խային գլխուն , իսկ եթէ գլխուն կա-  
րելի չըլլայ , մարմնին գլխաւոր մէկ  
մասին վրայ ջուր լեցնելով և միւնոյն  
ատեն «Ես մկրտիմ զքեկ յանուն Հօր  
և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» և կամ  
ըստ մեզ «Ծառայս կամ աղախինու-  
մկրտի ի ձեռս իմ՝ յանուն Հօր և Որդւ-  
ոյ և Հոգւոյն Սրբոյ» ըսելով :

Հ . Մկրտութիւն գիտաւորութիւն-  
պէտք է ունենայ :

Պ . Մկրտութիւն պէտք է , դէմաւորու-

թիւն ուսնենայ՝ մկրտութեան ատեն Ե-  
կեղեցւոյ ըրածն ընելու :

Հ. Մկրտուելու համար Ի՞րբ պէտք  
է երախան եկեղեցի բերել :

Պ. Կարելի եղածին չափ օր առաջ  
պէտք է երախան եկեղեցի բերել մկրտ-  
ուելու համար :

Հ. Մկրտուողը ի՞նչ բանի կը պար-  
ատորէ ինքինքը :

Պ. Մկրտուողը կը պարտաւորէ ինք-  
զինքը միշտ Հաւատքը դաւանելու և  
Յիսուս Քրիստոսի և Սնոր Եկեղեցւոյն  
օրէնքները պահելու :

Հ. Մկրտուողը ի՞նչ բանէ կը հրա-  
ժարի :

Պ. Մկրտուողը մշտապէս կը հրաժա-  
րի սասանայէն, անոր գործքերէն և  
խաբէութիւններէն :

Հ. «Սասանայի գործքերն ու խա-  
բէութիւնները» ըսելով ի՞նչ պէտք է  
հասկնալ :

Պ. «Սասանայի գործքերն ու խա-  
բէութիւնները» ըսելով պէտք է հաս-  
կնալ մեղքերը, և աշխարհին գէշ  
սկզբունքներն ու ընդունայնութիւն-  
ները :

Հ. Մկրտութեան ատեն մեր կնքա-  
հօր և կնքամօր միջոցաւ արուած  
խոստումները և եղած հրաժարումները  
պահելու պարտաւորը ինք :

Պ. Այս', պարտաւոր ինք զանոնք  
պահելու, ինչու օր Սատուած այդ պայ-  
մանով միայն մազ իր չնորհքին ըն-  
դունեցաւ :

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐՇՄԻ Վ.ԲԱՅ

Հ. Գրոշմի խորհուրդն ի՞նչ է :

Պ. Գրոշմի խորհուրդ մէն է որ  
մեզի Հոգին Սուրբը կուտայ, մեր հոգ-  
ւոյն մէջ կո դրոշմէ Յիսուս Քրիստոսի  
գինուորութեան կնիքը և մեզ կատար-  
եալ քիչստոնեալ կ'ընէ :

Հ. Գրոշմը ի՞նչ կերպով մեզ կա-  
տարեալ քրիստոնեայ կ'ընէ :

Պ. Գրոշմը մեզ կատարեալ քրիս-  
տոնեայ կ'ընէ, ինչու օր մեզ հաւատքի  
մէջ կը հաստատէ, և մէկալ առաքի-  
նութիւններն ու մկրտութեան ատեն  
6

լնդունած պարզեւները կը հաստատէ :

Հ . Դրոշմի ատեն ընդունած Հոգւոյն Սրբոյ պարզեւները որո՞նք են :

Պ . Դրոշմի ատեն ընդունած Հոգւոյն Սրբոյ պարզեւները եօթն են . իւմաստութիւն , Հանճար , Գիտութիւն , Խորհուրդ , Զօրութիւն , Աստուածականութիւն :

Հ . Դրոշմի խորհուրդն արժանաւոր կերպով ընդունելու համար պաշանջուած արամաղբութիւններն ուրո՞նք են :

Պ . Դրոշմի խորհուրդն արժանաւոր կերպով ընդունելու համար պէտք է չնորհաց վիճակի մէջ ըլլալ , մեր Սուրբ Կրօնին զլիսաւոր խորհուրդները ճանչնալ և այդ խորհուրդը յարգութեամբ և ջերմեաւանդութեամբ ընդունել , եթէ ընդունով չափահաս է :

Հ . Դրոշմի խորհուրդին պաշտօնաւեան ո՞վ է :

Պ . Դրոշմի խորհուրդին կարգաւոր պաշտօնաւեան Եպիսկոպոսն է . սակայն Եկեղեցւոյ թոյլաւութեամբ Արեւելեան ծէսերու մէջ պարզ քահանան ալ կը դրոշմէ :

Հ . Դրոշմ առլու առեն ի՞նչ արարողութիւններ աեզի կունենան :

Պ . Մաշտոցին մէջը եղած աղօթքները ընելին ետքը՝ Դրոշմ առլուլ Ս . Միւռոնով երախային ճակատը , աշուրները , քիթը , բերանը , ձեռուըները , սոսուըները , կանակը ու սիրաը խաչի ձեւով կ'օծէ ու այս խօսքը կ'ըսէ . «Իւղ անոյշ հեղեալ յանուն Քրիստոսի ՚ի վերայ քո , կնիք աստուածային երկնաւոր պարզեւացն» :

Հ . Մեռնն ի՞նչ է :

Պ . Ս . Մեռնը ձէթով և բալասաւով շինուած բազագրութիւն մ'է որ Աւագ Հինգշարթի օրը եպիսկոպոսէն կ'օրհնուի :

Հ . Այս խորհուրդին մէջ ձէթն ու բալասաւոր ի՞նչ կը նշանակեն :

Պ . Այս խորհուրդին մէջ ձէթը՝ որ շուատով կը տարածուի և կը գօրացնէ , կը նշանակէ այն առաս չնորհքը որ կը տարածուի քիթատոնէին հոգւոյն վրայ զանի իր հաւատքին մէջ հաստատելու համար . իսկ բալասաւոր որ անուշանոտ է և ապականութենէ կը պահէ , կը

նշանակէ թէ Դրոշմի չնորհքով զօրացած քրիստոնեան՝ իր առաքինութիւններուն քաղցր հոտը տարածելու և մուլորութիւններու ապականութենէ ազատ մնալու ընդունակ է :

Հ . Ի՞նչո՞ւ համար օծումները խաչաձեւ կ'ըլլան և առջի անգամ ճակատնիս կ'օծուի :

Պ . Որովհեան վախը և ամօթը ճակտի վրայ կը տեսնուին , այն պատճառաւ առջի անգամ ճակատնիս կ'օծուի , և օծումներն ալ խաչաձեւ կ'ըլլան , որպէս զի հասկնանք թէ պէտք չէ ամչնանք քրիստոնեայ անունը կրելնուս և քրիստոնէական հաւատաքը դաւանենուս , և պէտք չէ վախնանք հաւատաքի թշնամիներէն :

Հ . Դրոշմուռողը այս խորհուրդին չնորհքը պահելու համար ի՞նչ պէտք է որ ընէ :

Պ . Դրոշմի խորհուրդին չնորհքը պահելու համար քրիստոնեան ստեղ պէտք է աղօթէ , բարի գործքեր կատարէ և առանց մարդկային նկա-

տումի պէտք է Յիսուս Քրիստոսի օրէնքներուն համաձայն կեանք անյնէ :



### Գլուխ ԶՈՐՈՌՈՒԹ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ամենասուրբ հաղորդութեան մէջ Յիսուս Քրիստոսի իրական ներկայութիւնը

Հ . Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդն ի՞նչ է :

Պ . Ամենասուրբ Հաղորդութիւնը խորհուրդ մըն է որուն մէջ զարմանալի եղանակաւ մը հացը Յիսուս Քրիստոսի մարմինին՝ և գինին Անոր արիւնին փոխուելով՝ հացին և գինիին տեսակներուն տակ մեզի հոգեւոր մնունքը ըլլալու համար՝ իրականապէս և գոյացապէս Յիսուս Քրիստոսի Մարմնը , Արիւնը , Հոգին և Աստուածութիւնը կը պարունակուի :

Հ . Այս զարմանակի փոփոխութիւնը ի՞նչ կ'ըսուի :

Պ. Այս զարմանալի փոփոխութիւնը գոյացափոխութիւն կ'ըսուի :

Հ. Արդեօք Ամենասուրբ Հաղորդութեան մէջ կայ միեւնոյն Յիսուս Քրիստոս որ Երկինքն է և որ Ամենասուրբ Կոյսէն ծնանելով՝ Երկիր եկաւ :

Պ. Այս՝ Ամենասուրբ Հաղորդութեան մէջ իրականապէս և ստուգապէս միեւնոյն Յիսուս Քրիստոս կայ :

Հ. Ինչո՞ւ համար կը հաւասար թէ Ամենասուրբ Հաղորդութեան մէջ ստուգապէս Յիսուս Քրիստոս ներկայ է :

Պ. Անոր համար կը հաւասար թէ Ամենասուրբ Հաղորդութեան մէջ Յիսուս Քրիստոս ներկայ է, ինչու որ ինքը այդպէս ըստ և Եկեղեցին ալ այդպէս կը սորվեցնէ :

Հ. Առեք կերկի ըսուելէն առաջ նշանարքն ի՞նչ է :

Պ. Առեք կերկի ըսուելէն առաջ նըշխարքն ի՞նչ է :

Հ. Առեք կերկի ըսուելէն ետքը նըշխարքն ի՞նչ կ'ըլլայ :

Պ. Առեք կերկի ըսուելէն ետքը նըշխարքը՝ հացի տեսակին ներքեւ Յիսուս

Քրիստոսի ճշմարիտ մարմինն է :

Հ. Արքի ՚ի ամանել ըսուելէն առաջ սկիզբն մէջը ի՞նչ կայ :

Պ. Արքի ՚ի ամանել ըսուելէն առաջ սկիզբն մէջ քիչ մը գինի և քանի մի կաթիլ ալ ջուր կայ :

Հ. Արքի ՚ի ամանելէն ետքը սկիզբն մէջ ի՞նչ կայ :

Պ. Արքի ՚ի ամանելէն ետքը սկիզբն մէջ՝ զինիի տեսակիներուն ներքեւ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ արինը կայ :

Հ. Ե՞րբ հայը Քրիստոսի մարմին և գինին Անոր արինը կ'ըլլայ :

Պ. Հացը Քրիստոսի մարմին և գինին Անոր արինը կ'ըլլայ, երբ պատարագի ժամանակ քահանան Սրբագործութեան խօսքերը կ'արտասանէ :

Հ. Սրբագործութեան խօսքերուն ո՞վ տուած է այդպիսի զօրութիւն մը :

Պ. Սրբագործութեան խօսքերուն այդպիսի զօրութիւն մը տուած է Յիսուս Քրիստոս որ ամենակարող Ասուուած է :

Հ. Աւրեմն որբագործութենէ ետքը հայէն ու գինին ըան մը չի մնար :

Պ. Սրբագողծութենէ ետքը միաւցածը հայը և գինին չէ, այլ մի միայն հացին և գինիին տեսակները կը մի ան :

Հ. Հացին և գինիին տեսակներն ի՞նչ են :

Պ. Հացին և գինիին տեսակներն են անոնց զգալի քանակութիւնը և որակութիւնը, լնչպէս անոնց ձեւը, դոյնը և համը :

Հ. Սրգեօք հացի տեսակներուն ներքե մի միայն Քրիստոսի մարմինը և գինիի տեսակներու ներքե մի միայն Անոր արի՞ւնը կը գտնուի :

Պ. Թէ՛ հացի տեսակներուն և թէ գինիի տեսակներուն ներքե Յիսուս Քրիստոս կենդանի կերպով ներկայ է, այսընքն իր մարմինովը, արդւնովը, հոգուովը և Աստվածածութիւնովը ներկայ է :

Հ. Յիսուս Քրիստոս աշխարհիս վրայ սրբագործուած բոլոր նշխարքներուն մէջ ալ ներկայ է :

Պ. Այսո՛, Յիսուս Քրիստոս աշխարհիս վրայ սրբագործուած բոլոր նշխարքներուն մէջ ալ ներկայ է :

Հ. Երբ նշխարքը կիսուի, Յիսուս Քրիստոս ալ կը կիսուի՞ :

Պ. Երբ նշխարքը կիսուի Յիսուս Քրիստոս ալ չկիսուիր, միմիայն հացին և գինիին տեսակներն են որ կը կիսուին :

Հ. Յիսուս Քրիստոսի մարմինը նըշխարքին ո՞ր մասին մէջ կը գտնուի :

Պ. Յիսուս Քրիստոսի մարմինը մէջ ալ ամբողջապէս կը գտնուի :

Հ. Եկեղեցիներուն մէջ ի՞նչ պատճառուի համար Ամենասուրբ Հաղորդութիւն կը պահուի :

Պ. Եկեղեցիներուն մէջ Ամենասուրբ Հաղորդութիւնը կը պահուի, որպէս զի հաւատացեալներէն պաշտուի և հարկ եղած առեն հիւանդներուն տարուի :

Տ. Ամենասուրբ Հաղորդութեան վախճանին եւ արդիւններուն վրայ

Հ. Յիսուս Քրիստոս ինչո՞ւ համար հաստատեց Ս. Հաղորդութիւնը :

Պ. Յիսուս Քրիստոս գլխաւորաբարերեք պատճառի համար հաստատեց Ս. Հաղորդութիւնը.

1. Որպէս զի նոր օրէնքի մնայուն գոհն ըլլայ : 2. Որպէս զի մեր հոգւոյն մնունդն ըլլայ : 3. Որպէս զի իր չարչարանքներուն ու մահուանը մշտնջենաւոր յիշատակ : իր մեզի հանդէպ ունեցած սիրոյն և յաւխանական կեանքին պատուական մէկ գրաւականն ըլլայ :

Հ . Հաղորդութիւնը ի՞նչ գլխաւոր արդիւնքներ յառաջ կը բերէ զինք արժանապէս ընդունողներուն վրայ :

Պ . Հաղորդութիւնը զինք արժանապէս ընդունողներուն վրայ հետեւեալ արդիւնքները յառաջ կը բերէ 1. Ենչպէս որ նիսթական մնունդը մարմինին կեանքը կը պահէ և կ'ամեցնէ , այսպէս ալ Հաղորդութիւնը՝ հոգւոյ կեանքն եղող չնորհքը կը պահէ և կ'ամեցնէ : 2. Ներելի մեղքերը կը թողուե մահուչափ մեղքերէն կը պահապահէ : 3. Հոգեւոր միմիթարութիւն յառաջ կը բերէ :

3. Հաղորդութիւնը աղէկ բնդրւնելու պատրաստութիւններուն եւ հաղորդուելու պարտաւորութեան վրայ

Հ . Սղէկ կերպով հաղորդուելու համար քանի՞ բան պէտք է :

Պ . Սղէկ կերպով հաղորդուելու համար երեք բան պէտք է . 1. Շնորհաց վիճակի մէջ ըլլալ . 2. Կէս գիշերէն սկսելով մինչեւ հաղորդուելու առեն ծոմ կենալ . 3. Գիտնալ թէ ի՞նչ է ընդունածը , և ջերմեռանդութիւնով մօսենալ Ա . Հաղորդութեան :

Հ . Շնորհաց վիճակի մէջ ըլլալ ի՞նչ կը նշանակէ :

Պ . Շնորհաց վիճակի մէջ ըլլալ՝ խղձմանքը մաքուր ըլլալ , ո' և է մասուչափ մեղքէ ազատ ըլլալ ըսկէլ է :

Հ . Մահուչափ մեղք ունենալը գիտնալով հանդերձ նորէն հաղորդուողը ի՞նչ մեղք կը գործէ :

Պ . Մահուչափ մեղք ունենալը գիտնալով հանդերձ նորէն հաղորդուելու յանդգնողը սոսկալի սրբապղծութեան մեղք կը գործէ :

Հ . Ամենասուրբ Հաղորդութեան համար պահանջուած ծոմն ո՞րն է :

Պ . Ամենասուրբ Հաղորդութեան համար պահանջուած ծոմը թեական ծովն է որ կ'աւրուի եթէ մէկը իրրե մուռնդկամ իրրե ըմպելիք ամենափոքր բանմ'ալ ուսաէ կամ խմէ : Այս ծոմը կ'ըսկը կէս գիշերէն և կը տեւէ՝ մինչեւ հաղորդութիւնը ընդունած ժամանակ :

Հ . Ծոմ չեղած ատեն հաղորդուիլը բնաւ թոյլ արուած չէ :

Պ . Մահուան վտանգի մէջ գանուող հիւանդներուն թոյլ արուած է անծոմ ալ հաղորդուելու , և այն ատեն հաղորդութիւնը թոջակ կ'ըստի :

Հ . Ի՞նչ կը նշանակէ «գիտնալ թէ ի՞նչ է ընդունածը» :

Պ . «Գիտնալ թէ ի՞նչ է ընդունածը» կը նշանակէ որ հաղորդուողը պէտք է գիտնայ այս խորհուրդին վերաբերեալ քրիստոնէական վարդապետութիւնը և հաստատ կերպով հաւատայ անոր :

Հ . Ի՞նչ կը նշանակէ «ջերմեռանդութիւնով մօտենալ Ս . Հաղորդութեան» :

Պ . «Ջերմեռանդութիւնով մօտենալ Ս . Հաղորդութեան» կը նշանակէ՝ խոնարհութիւնով և թէ՛ կեցուածքի և թէ՛ զգեստի կողմանէ համեստութիւնով մօտենալ Ս . Հաղորդութեան և հաղորդուելէն առաջ պատրաստուիլ , հաղորդուելէն ետքն ալ չնորհակալութեան ազօթք ընել :

Հ . Ե՞րբ կը պարտաւորուինք հաղորդուելու :

Պ . Կը պարտաւորուինք հաղորդուելու , ամէն ատրի Զատկին և այն այց կաթողիկէներու Եկեղեցիներէն ալ Հայ միոյն մէջ : Ասկից զատ երբ մահուան վտանգ մը տեսնենք նորէն կը պարտինք հաղորդուիլ :

Հ . Զատկական հաղորդութեան պարտքը Ե՞րբ կ'սկսի :

Պ . Զատկական հաղորդութեան պարտքը կ'սկսի , Երբ աղան ընդունակ կ'ըլլայ պէտք եղած պատրաստութիւններով անոր մօտենալու :

Հ . Յաճախ հաղորդուիլը բարի և օգտակած է :

Պ . Խոստով մօտենահօր հրամանով և

պէտք եղած պատրաստութիւններով  
յաճախ հաղորդուիլը բարի , օգտակար  
և գերազանց բան է :

Հ . Հաղորդուելէն ետքը Յիսուս  
ո՞րչափ ժամանակ կը մնայ մեզի հետ :

Պ . Հաղորդուելէն ետքը Յիսուս իր  
շնորհքով մեզի հետ կը մնայ , որչափ  
ասեն որ մահուչափ մեղքով զինք մեր  
սրտէն չենք արտաքսեր , իսկ իրաւ-  
կան ներկայութեամբը կը մնայ մեզի հետ  
մինչեւ որ խորհրդական տեսակները  
սպառին :

4. Պատարագի սուրբ զոհին վրայ

Հ . Հաղորդութիւնը միմիայն խոր-  
հուրդ է :

Պ . Հաղորդութիւնը մի միայն խոր-  
հուրդ չէ , այլ նաև նոր օրէնքի մնա-  
յուն զոհն է :

Հ . Նոր օրէնքի այս զոհը ի՞նչ  
կ'ըսուի :

Պ . Նոր օրէնքի այս զոհը Սուրբ  
Պատարագ կ'ըսուի :

Հ . Սուրբ Պատարագն ի՞նչ է :

Պ . Սուրբ Պատարագը՝ Յիսուսի  
Քրիստոսի մարմնին զոհն

է , որ խաչի զոհին յիշատակին համար ,  
հացի և զինուոյ երեւոյթներուն ներքե-  
մեր սեղաններուն վրայ կը մատուցուի :

Հ . Սուրբ Պատարագի զոհը խաչի  
զոհին ինչո՞վ կը նմանի :

Պ . Սուրբ Պատարագի զոհը անով  
կը նմանի խաչի զոհին .որ երկուքին  
մէջն ալ Յիսուս Քրիստոս մըեւնոյն ա-  
տեն թէ՛ քահանայ է և թէ զոհ : Սա-  
կայն մատուցանելու եղանակին մէջ կը  
տարբերին :

Հ . Մատուցանելու եղանակին մէջ  
ի՞նչ տարբերութիւն կայ .

Պ . Այս տարբերութիւնը կայ ո՞ր  
խաչի զոհին մէջ Յիսուս Քրիստոս ի-  
րականապէս իր արիւնը թափեց և ի-  
րականապէս մեռաւ , մինչդեռ պատա-  
րագի զոհին մէջ որ անոր մէկ յիշա-  
տակն է , Յիսուս Քրիստոս կը զոհուի  
առանց իր արիւնը թափելու : Դարձ-  
եալ , խաչի զոհով մեզ գնեց , իսկ պա-  
տարագի զոհով կը մերձեցնէ մեզի  
իր արդիւնքները :

Հ . Ս . Պատարագի զոհը ո՞վ հաս-  
տառեց .

Պ. Նոյն լակ Քրիստոս Տէրն մեր  
հաստատեց պատարագի Ս. զոհը, երբ  
վերջին ընթրիքի ատեն ամենասուրբ  
հաղորդութիւնը հաստատեց :

Հ. Պատարագի Ս. զոհը ի՞նչ նպա-  
տակներու համար կը մատուցուի Առ-  
տուծոյ :

Պ. Պատարագի Ս. զոհը չորս նպա-  
տակի համար կը մատուցուի Առտու-  
ծոյ. 1. Անոր պարտ ու պատշաճ պա-  
տիւը մատուցանելու համար. 2. Իր  
բարերարութիւններուն փոխարէն Անոր  
չնորհակալ ըլլալու համար. 3. Անոր  
բարկութիւնը իջեցնելու և մեր մեղ-  
քերուն համար Անոր վայելուչ գոհա-  
ցում մը տալու նպատակաւ. 4. Մեզի  
հարկաւոր եղած բոլոր չնորհքները իր-  
մէն խնդրելու համար :

Հ. Ամէն օր Ս. պատարագ տես-  
նելն աղէ՞կ բան է :

Պ. Ամէն օր Ս. պատարագ տես-  
նելը, թէև պատուիրուած չէ, սակայն  
շատ օդտակար է :

Հ. Արդիւնաւոր կերպով Ս. պատա-  
րագ տեսնելու համար ի՞նչ պէտք է ընել.

Պ. Արդիւնաւոր կերպով Ս. Պա-  
տարագ տեսնելու համար պէտք է սկիզ-  
բէն մնչե վերջը մեծ մտադրութիւ-  
նով անոր ներկայ գանուիլ, և Աստու-  
ծոյ վրայ. Քրիստոսի Տեառն մերց  
չարչարանքներուն վրայ մտածելով և  
ջերմեռանդ աղօթքներ ընելով զայն  
տեսնել :

### Գլուխ Հինգերինի

ՍՊԱՇԽԱՐԹԵԱՆ ԽՈՅՑՈՒԹԴԻՆ ՎՐԱՅ  
1. Այս խորությունը աղէկ թնդունելու համար պէտք  
եղած տանաբարութիւններու եւ մասնաւուապէն  
խղճանակի նենութեան վրայ

Հ. Ապաշխարութեան խորհուրդն  
ի՞նչ է :

Պ. Ապաշխարութեան խորհուրդն որ  
խսանվանանք ալ կ'ըսուի. Ցիսուս  
Քրիստոսին հաստատուած խորհուրդն մըն  
է որ մկրտութիւնէն ետքը գործուած  
մեղքերը կը թնդու :

Հ. Աղէկ խսանվանանք Ալալու-  
համար քանի՞ բան պէտք է :

Պ. Աղէկ խոստովամնանք բլլալու համար հինգ բան պէտք է. 1. Խղճմտանքը քննել. 2. գործած մեղքերուն վրայցաւիլ և զանոնք տաել. 3. ուրիշ անդամ մեղք չգործելու հաստատ առաջադրութիւն գնել. 4. ունեցած ամրող մեղքերը խոստովանիլ. 5. Խոստովանահօր դրած ապաշխարանքը կատարել: Հ. Խղճմտանքը ի՞նչպէս պէտք է քննել:

Պ. Խղճմտանքը պէտք է քննել Սոսուծոյ առջև խնամքով միտքը բերելով այն մեղքերը, զորոնք գործածենք Ասսուծոյ և Եկեղեցւոյ պատուիրաններուն և մեր վիճակին պարտաւորութիւններուն դէմ խորհուրդով, խօսքով, գործով և կամ զանցառութիւնով և զանոնք դեռ չենք խոստովանած:

Հ. Խղճմտանքի քննութեան ատեն մեղքերուն թիւն ալ վնասուելո՞ւ ենք:

Պ. Խղճմտանքի քննութեան ատեն մահուչափ մեղքերու թիւերն ալ քըննելու ենք:

Հ. Արդեօք այս քննութեան ատեն պարտաւո՞ր ենք. մտքերնիս բերել նաև

այն պարագաները որոնց մէջ գործած ենք մեր մեղքերը:

Պ. Պէտք է նաև մտքերնիս բերենք այն պարագաները որոնք մեղքին աւասակը կը փոխեն և կամ ներելի մեղք մը մահուչափ կ'ընեն:

2. Ցափի եւ Առաջադրութեան վրայ

Հ. Ի՞նչ ըսել է «մեղքերու վրայ ցաւիլ»:

Պ. «Մեղքերու վրայ ցաւիլ» ըսելը կը նշանակէ հոգւոյ այն ահաճութիւնը որով կ'ատենք գործած մեղքերնիս և կ'առաջադրենք ապագային մէջ ա'յլ ռւս մեղք չը գործելու:

Հ. Ի՞նչ պատճառներու համար պէտք է զղջանք մեր մեղքերուն վրայ:

Պ. Պէտք է զղջանք մեր մեղքերուն վրայ որովհետև անսնցմով Աստուծոյ պատիմին արժանի եղած ենք, և մանաւանդ պէտք է զղջանք անոր համար որ ամենաբարի և ամէն բանէ աւելի սկզբուելու արժանի Աստուած մը վշապացուցած ենք:

Հ. Մեղքերու վրայ այս զլջումը

ունենալու համար ի՞նչ պէտք ենք  
ընել :

Պ. Պէտք է որ բոլոր սրամնց Առա-  
սուծմէ խնդրենք այդ ցաւը . և մե-  
զանչելով գործած մեծ չարիքնիս մըտ-  
քերնիս բնրելով արթնցնենք դայն  
մեր մէջ :

Հ. Մեղքերու վրայ զգացուած ցաւը  
քանի տեսակ է :

Պ. Մեղքերու վրայ զգացուած  
ցաւը երկու աեսակ է . անկատար զբո-  
ջում և կատարեալ զղջում :

Հ. Կատարեալ զղջումը ո՞րն է :

Պ. Կատարեալ զղջումը այն տա-  
ճութիւնն է որով կը ցաւինք անհունա-  
պէս բարի և բատ ինքեան սիրուելու  
արժանի Աստուած մը վշացուցած ըլ-  
լալնուս վրայ :

Հ. Այս զղջումը ինչո՞ւ համար կա-  
տարեալ կ'ըսուի :

Պ. Այս զղջումը երկու պատճառի  
համար կատարեալ կ'ըսուի . 1. որով-  
հետեւ Աստուծոյ բարութիւնը ըստ ինք-  
եան նկատի կ'առնէ . 2. որովհետեւ ան-  
միջապէս մեր մեղքերուն թողութիւնը

կ'րնդունի ( թէև պարտաւոր կը մնանք  
զանոնք խոստովանելու ) :

Հ. Անկատար զղջումը ո՞րն է :

Պ. Անկատար զղջումը այն ցաւն է  
որով կը զղջանք զԱստուած վշացու-  
ցած ըլլալնուս վրայ . ինչու որ նա մեր  
գերագոյն գատաւորն է : Հետեւաբար  
այս ցաւը կը զգանք մեր մեղքերուն  
պատճառաւ արժանի եղած պատիժներ-  
նիս՝ այս կաք անզին աշխարհի մէջ քա-  
շելու վախին համար :

Հ. Մեղքերնուս թողութիւնն ըն-  
դունելու համար անկատար զղջումը  
բաւական է երբ անոր հետ մրանայ  
խորդական արձակումն ալ :

Պ. Մեղքերնուս թողութիւնն ըն-  
դունելու համար անկատար զղջումը  
բաւական է երբ անոր հետ մրանայ  
խորդական արձակումն ալ :

Հ. Մարդ՝ մեղանչելով ի՞նչ չարիք  
կը գործէ :

Պ. Մեղանչելով մարդուն գործած  
չարիքը անոր մէջ կայացած է որ . մարդ  
մեղքովը կը կորսնցնէ Աստուծոյ չնորհքը  
և արքայութիւնը . գժոխքի տանջանք-  
ներուն արժանի կ'ըլլայ և կը վշացնէ

այն Աստուածը որ մեր Տէրն ու Հայրն է, որ մեղի այնքան բարիքներ ըրածէ, մեզ այնչափ կը սիրէ և ամէն բանէ վեր սիրուելու և հաւատարմութեամբ պաշտուելու անհուն իրաւունք մ'ունի:

Հ. Զջջումը ամբողջ մեղքերու վրայ պէտք է որ տարածուի:

Պ. Այս', պէտք է որ զջջումը տաշրածուի գործուած բոլոր մահուչափ մեղքերու վրայ:

Հ. Միայն ներելի մեղքեր խոստովանողն ալ պէտք է որ ցաւի բոլորին վրայ:

Պ. Խոստովանանքին վաւերութեանը համար անոնցմէ մէկ քանիին վրայ ցաւիլը բաւական է, բայց ամէնուն թողութիւնն առնելու համար պէտք է ցաւիլ ամբողջին վրայ:

Հ. «Հաստառն առաջադրութիւնն» ի՞նչ է:

Պ. «Հաստառն առաջադրութիւնն»ը ա'յլ եւս մեղք չի գործելու և մեղքէ փախչելու համար հարկաւոր եղած ամէն միջոց գործածելու հստատուն կամք մըն է:

3. Խոստովանութիւն կամ մեղեւուամբասանութիւնը

Հ. Մեղքերու խոստովանութիւն ի՞նչ լսել է:

Պ. Մեղքերու խոստովանութիւն լսելն՝ այդ մեղքերուն արձակումը և ապաշխարութիւնը առնելու համար որոշ կերպով անսնք մեր խոստովանահօր ամբասանել լսել է:

Հ. Ո՞ր մեղքերը խոստովանելու պարտական ենք:

Պ. Պարտական ենք խոստովանելու բալոր մեր մահուչափ մեղքերը. սակայն ներելի մեղքերն ալ խոստովանիլն շատ աղեկ բան է:

Հ. Մահուչափ մեղքերն ի՞նչպէս պէտք ենք խոստովանիլ:

Պ. Մահուչափ մեղքերն խոստովանած առանցիս պէտք ենք լսել անոնց թիւը, տեսակը, և այն պարագաները որոնք տեսակը կը փախին և կամ ներելի մեղք մը մահուչափ կ'ընեն:

Հ. Ի՞նչ պէտք է ընել անիկա որ իր մեղքերուն ձիւդ թիւը չի կրնար ցիշել:

Պ. Ան որ իր գործած մեղքերուն  
ճիշդ թիւը չինչեր, պէտք է բոէ ճիշ-  
մարտութեան աւելի մօս եղաղ թիւը :

Հ. Ան որ ամչնալով ճշմարտու-  
թիւնը չի յայսներ խոստովանանօրը,  
աղէկ խոստովանանք եղած կրնաց  
բառիւ :

Պ. Ան որ ամչնալուն համար մա-  
հուչափ մեղք մէ ծածկելով, կամ գիտ-  
նալով հանգերձ մեղաց թիւը չբաւլով,  
և կամ հարկաւոր պարագաները կի-  
պարզելով՝ ճշմարտութիւնը չի յայսներ  
խոստովանանօրը, այնպիսին սրբապրդ-  
ծութիւն կը գործէ :

Հ. Ի՞նչ պէտք է լնել անիկա որ  
գիտէ թէ աղէկ չէ խոստովանած :

Պ. Ան որ գիտէ թէ աղէկ չէ խոս-  
տովանած, պէտք է կրնէ գէջ եղած  
խոստովանանքները և պէտք է յայսնէ  
նաև գործած սրբապրծութիւնը և կամ  
սրբապրծութիւնները :

Հ. Եթէ մէկը մոռնալով մահուչափ-  
մեղք մը չի խոստովանի, իր խոստովա-  
նանքն աղէկ եղած կ'ըլլա՞յ:

Պ. Ան որ մոռնալով մահուչափ

մեղք մը չի խոստովանի, իր խոստո-  
վանանքն աղէկ եղած կ'ըլլայ, միայն  
թէ խողճանանքի քննութիւնն խնամքով  
կատարած ըլլայ, բայց և այնպէս պար-  
աւուոր է այդ մոռցած մեղքը խոստո-  
վանի յաջորդ խոստովանանքի ատեն :

Հ. Ի՞նչպէս պէտք է ներկայանալ  
խոստովանանօրը:

Պ. Պէտք է ծունկ չոքիւ և երեսը-  
խաչակնքիւ :

Հ. Ի՞նքզինքը խաչակնքելէն ետքը  
ի՞նչ պէտք է լնել :

Պ. Ինքզինքը խաչակնքելէն ետքը  
պէտք է ըսել «խոստովանիմ առաջի-  
նառնուծոյ ամենակարսղի», երանուծոյ  
Մարիամու միշտ կուսին, երանելւոյն  
Միքայելի հրեշտակապետին, երանել-  
ւոյն Յոհաննու Մկրտչին և սրբոց ա-  
ռաքելոյն Գետրոսի և Պօղոսի և Սրբայ  
Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և  
ամենայն սրբոց, և առաջի քո, Հայր-  
Սուրբ, քանզի մեղաց յոյժ խորհրդուով,  
բանիւն գործով, վայ ինձ, վայ ինձ և  
յաւէտ վայ ինձ»: Ասկից ետքը պէտք-  
էոր մէկիկ մէկիկ ըսենք մեր մեղքերը:

Հ . Խոստովանանքի ատեն՝ անցած կեանքերնուս ծանր մեղքերէն մէկ քանի հատը ըսելն աղէկ բա՞ն է :

Պ . Այս', մանաւանդ երբ մէկը մի միայն նեղելի մեղքեր խոստովանած լլայ, այն ատեն անցած կեանքերնուս ծանր մեղքերէն մէկ քանի հատը ըսելը շատ աղէկ բան է, սրավհետեւ այս կերպով զղջումնիս ապահով կ'լլայ, ինչու որ առանց զղջումի խոստովանանքը վաւեր չէ :

Հ . Մեղքերուն ամրաստանութիւնը լմնալէն ետքը ի՞նչ պէտք է ընել :

Պ . Մեղքերուն խոստովանութիւնը լմնալէն ետքը, պէտք է յորգութիւնով մտիկ բնել խոստովանահօրը խրասներուն : Կատարելու անկեղծ բաղանքով լնդունիլ ապաշխարութիւնը և արձակում առաջ պէտք է սրանց կատարել զղջման ներգործութիւնը :

Հ . Արձակում առնելէն ետքը ուրիշ ի՞նչ կը լնայ լնելիք :

Պ . Արձակում առնելէն ետքը պէտք է չնորհակալ լլամ Աստուծոյ, և ոյ-

չափ կարելի է շուտով կատարել ապաշխարանքնիս և ջանալ որ խոստովանած հօր տուած խրասները գործադրենք :

4. Արձակում եւ ապաշխարամեմ

Հ . Արձակումն ի՞նչ է :

Պ . Արձակումը՝ ապաշխարողին մեղքերը Քրիստոսի անունով ներելու. համար քահանային արտասանած վճիռն է :

Հ . Ապաշխարանքն ի՞նչ է :

Պ . Ապաշխարանքն է այն աղօթքն և կամ բարի գործն զոր խոստովանահայրը խոստովանորդւոյն կը հրամայէ անոր մեղքերուն քաւութեանը համար :

Հ . Խոստովանանքի ժամանակ տրըուած ապաշխարհանքն և ըստ պէտք է կատարել :

Պ . Եթէ խոստովանահայրը ապաշխարանքն օրը որոշած է, պէտք է կատարել անոր հրամանին համաձայն, իսկ եթէ չէ որոշած, այն ատեն, պէտք է կատարել փութով որպէս զի չի մոռցուի :

Հ . Շատ անգամ խոստովանիլը աշղէկ բա՞ն է :

Պ . Շատ աղէկ բան է գոնէ ամիսը

մէյ մը խոստովանիլ . բայց ան որ գիշաէ թէ մահուչափ մեղքի վիճակի մէջ է . պէտք է աւելի փութայ խոստովանանք ըլլալու :

### ԳԼՈՒԽ ՎԵՅԵԲՈՐԴԻ

Հ . Վերջին օծումն ի՞նչ է :

Պ . Վերջին օծումը խորհուրդ մինչ է որ մահուան վասնդի մէջ եզզու հւանդները հոգեւորապէս և նոյն իսկ մարմաւորապէս սիսիկելու (միսիթարելու) համար հաստատուած է :

Հ . Վերջին օծումի խորհուրդն ի՞նչ արդիւնքներ յառաջ կը բերէ :

Պ . Վերջին օծումի խորհուրդն յառաջ կը բերէ սա հեեեւեալ արդիւնքները . 1. Սրբարար շնորհքը կ'աճեցնէ : 2. Կը ջնջէ ներելի մեղքերը և նոյն իսկ այն մահուչափ մեղքերը որ զզջացող հիւանդը չի կրնար խոստովանիլ : 3. Կը վերցնէ այն տկարութիւնը և բարին գործելու համար զգացուած թմրութիւնը որ մեղքերուն թողութիւն առ-

նելէն ետքն ալ կը մնայ : 4. Ցաւերուն համբերութեամբ տանելու փորձութիւնսերուն գէմ գնելու և սրբութեամբ մեռնելու ոյժ կուտայ : 5. Եթէ մեր հոգեւոյն փրկութիւնը օգտակար է . մարմնոյ առաջնութիւնը վերստանալու կ'օգնէ :

Հ . Ե՞րբ պէտք է ընդունիլ վերջը օծումը :

Պ . Վերջին օծումը ընդունելու համար պէտք չէ սպասուի վերջին ժամուն երբ հրանդութիւնը կը կրամնցնէ . այլ երբ հիւանդութիւնը ծանր և վատնգաւոր է , պէտք է իրեն մասակարարուի այս խորհուրդը :

### ԳԼՈՒԽ ԵԹԹՆԵԲՈՐԴԻ

ԿԱՐԳ ՔԱՂԱՆԱՅԻՐԵԵԱՆ

Հ . Կարգ Քահանայութեան ի՞նչ է :

Պ . Կարգը խորհուրդ մէն է որ Աստուծոյ պաշտամունքին և հոգիներու փրկութեանը վերաբերող պաշտօնները կատարելու իշխանութիւն կուտայ , և

զայն ընդունողին հոգւոյն մէջ՝ Աս-  
տուծոյ պաշտօնեայի կնիքը կը դրոշմէ :

Հ . Եկեղեցական վիճակն ընդգրկո-  
ղը՝ ի՞նչ նպատակ պէտք է ունենայ :

Պ . Եկեղեցական վիճակը ընդգրկո-  
ղը՝ Աստուծոյ փառքէն և հոգիներու-  
փրկութենէն զատ նպատակ ունենա-  
լու չէ :

Հ . Մարդ ինքնիրեն կրնայ Եկեղե-  
ցական վիճակն ընտրել :

Պ . Ոչ ոք կրնայ ինքնիրեն Եկեղե-  
ցական վիճակն ընտրել . այլ պէտք է  
որ Աստուծմէ կոչում ունենայ անոր :

Հ . Ուրեմն առանց կոչում ունենա-  
լու Եկեղեցական վիճակն ընդգրկողը  
աղէկ չընէր :

Պ . Առանց կոչում ունենալու Եկե-  
ղեցական վիճակն ընդգրկողը շատ ծանր  
մեղք կը գործէ . և ինքնինքը յաւիտե-  
նական կորստեան վիճակի մէջ կը դնէ :

Հ . Սուրբ կարգերու կոչում ունե-  
ցազմերուն հանդէպ հաւատացեալներուն  
պարտականութիւնները որո՞նք են :

Պ . Հաւատացեալները պարտաւոր են  
1 . Թողուլ որ իրենց զաւակները

կատարեալ ազատութիւնով հետեւին-  
Աստուծոյ կոչումին :

2 . Սղօթել Աստուծոյ որ համի տալ-  
իր Եկեղեցւոյն աղէկ հոգիւներ և ե-  
ռամնդնալից պաշտօնեաներ :

3 . Մեծ յարգութիւն մը ցոյց տալ-  
ամէն անոնց որ սուրբ կարգերով Աս-  
տուծոյ ծառայութեանը կոչուած են :



### ԳԼՈՒԽ ԱԻԹԵԲԱԲԴ

Պ Ա Ա Կ

Հ . Պատկի խորհուրդն ի՞նչ է :

Պ . Պատկը Յիսուս Քրիստոսէ հաս-  
տատուած խորհուրդ մըն է, որ մարդուն  
և կնոջ միջև սուրբ և անլուծանելի  
միութիւն մը յառաջ կը բերէ . և անոնց  
չնորհք կուտայ մէկզմէկ սրբութեամբ  
սիրելու և իրենց զաւակները քրիստո-  
նէաբար գնատիարակելու :

Հ . Պատկի խորհուրդը մասնաւոր  
նշանակութիւն մ'ալ ունի :

Պ . Պատկի խորհուրդը կը նշանակէ  
Յիսուս Քրիստոսի մաւարութիւնը Ս .

Եկեղեցւոյ հետ որ իր հարսն և մեր ալ  
կաթողին մայրն է :

Հ . Պատակի խորհուրդն ընդունողները  
պարտաւո՞ր են չնորհաց վիճակի մէջ  
գտնուիլ :

Պ . Այս՝ պատակի խորհուրդն ընդունողները պարտաւոր են Ս . Պատակի  
ատեն չնորհաց վիճակի մէջ գտնուելու,  
ապա թէ ոչ սրբազգծութիւն կը  
գործին :

Հ . Պատակը ի՞նչպէս կը կատարուի :

Պ . Քրիստոնէից մէջ պատակը վաւեշաբար և օրինաւորապէս կատարելու  
համար մէկ հատիկ միջնցն է զայն Ս .  
Եկեղեցւոյ արարողութիւններուն համաձայն կատարելը :

\*\*\*+\*\*\*

### ՃԻՆԳԵՐՄՐԴԻ ՄԱՍ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ՎՐԱՅ

### ԳԼՈՒԽ ՄԻԱՅՆՈՒԿ

Հ . Քրիստոնէին համար քրկութեան հարկաւոր առաքինութիւններն  
որո՞նք են :

Պ . Քրիստոնէին համար քրկութեան  
հարկաւոր առաքինութիւնները երեք  
են . Հաւատաք , Յոյն և Սէր :

### 1. ՀԱԽԱՏՔ

Հ . Հաւատաքն ի՞նչ է :

Պ . Հաւատաքը մեր հոգւոյն մէջ  
հեղեալ գերբնական առաքինութիւն  
մըն է , որով , ծասուծոյ հեղինակութեանը վրայ վսահելով , իրը ճշմարդիտ կը հաւատանք ինչ որ մեզի յայտնած է և ինչ որ իր Եկեղեցւոյն միջոցաւ կ'առաջարկէ մեզի հաւատակութամար :

Հ . Աստուծմէ յայտնուած ճշմարտութիւնները ի՞նչպէս կրնանք ճանչնալ :

Պ . Աստուծմէ յայտնուած ճշմարտութիւնները կը ճանչնանք Ս . Եկեղեցւոյ միջոցաւ որ անսփառ է . այս ինքն Սրբազն Քահանայապետին միջոցաւ որ Ս . Պետրոսի յաջորդն է և Եպիսկոպոսներու միջոցաւ , որոնք նոյն խակ Յիսուս Քրիստոսէն հրահանգուած Առաքեալներուն յաջորդական են :

Հ. Սրբազն Քահանայապետը անսպիսած է :

Պ. Այս', Սրբազն Քահանայապետը նոյն իսկ Եկեղեցւոյ անսփառութեամբն անսփառ է երբոր բոլոր քրիստոնեաներուն Հովիւի և վարդապետի պէս խօսելով՝ հաւատքի և բարի վարքի վերաբերեալ ճշմարտութիւնները կը սահմանեի :

Հ. Աստուծմէ յայտնուած ամէն ճշմարտութիւնները կրնա՞նք հասկնալ :

Պ. Աստուծմէ յայտնուած ամէն ճշմարտութիւնները չենք կրնար հաւկլնալ, ինչու որ հաւատքի ճշմարտութիւններն մէկ քանին խորհուրդներ են :

Հ. Խորհուրդներ են չսելով ի՞նչ կը հասկնաս :

Պ. Խորհուրդներ են ըսելով կը հաւկլնամ որ այդ ճշմարտութիւնները մեր խելքին զօրութենէն վեր են :

Հ. Ի՞նչ պատճառի համար պէտք է որ հաւատանք հաւատքի ճշմարտութիւններուն :

Պ. Որովհետեւ Աստուծ որ անսընալ ճշմարտութիւն է, զանոնք մեղի

յայտնած է և կ'ուզէ որ անոնց հաւատանք Ս. Եկեղեցւոյ միջոցաւը :

Հ. Փրկուելու համար բաւակա՞ն է միայն ընդհանուր և անորոշ կերպով հաւատալ հաւատքի բոլոր ճշմարտութիւններուն :

Պ. Փրկուելու համար բաւական չէ միայն ընդհանուր և անորոշ կերպով հաւատալ հաւատքի բոլոր ճշմարտութիւններուն, որովհետև կան քանի մը ճշմարտութիւններ, որոնց հարկաւորաբար պէտք է հաւատալ որոշ և մասնաւոր հաւատաց ներգործութիւնով մը. օրինակի համար, Աստուծոյ միութիւնը և Ամենասուրբ Երրորդութիւնը, Յիսուս Փրկիչին Մարգեղութիւնը և մահը այդ տեսակ ճշմարտութիւններ են :

Հ. Աստուծմէ յայտնուած ճշմարտութիւնները ո՞ւր բովանդակուած են :

Պ. Աստուծմէ յայտնուած գլխաւոր ճշմարտութիւնները Առաքելոց Հանգանակին մէջ բովանդակուած են, որուն սովորաբար Հաւատամի՛ կ'ըսուի :

Հ. Յոյսն ի՞նչ է :

Պ. Յոյսը մեր հոգեւոյն մէջ հեղեալ

գերբնական առաքինութիւն մ'է , որով  
կը բաղձանք և կը սպասէնք յաւլտե-  
նական կեանքը , զոր Աստուած իրեն  
ծառայողներուն խոստացած է , և կը  
յուսանք ընդունել այդ յաւլտենական  
կեանքին համնելու հարկաւոր եղած  
օգնութիւնները :

Հ . Ի՞նչ պատճառի համար պիտի  
յուսանք Աստուծմէ յաւլտենական  
կեանքը և անոր համնելու հարկաւոր  
եղած օգնութիւնները :

Պ . Յաւլտենական կեանքը և անոր  
համնելու հարկաւոր եղած օգնութիւն-  
ները պիտի յուսանք Աստուծմէ , որով-  
հետև Աստուած՝ Յիսուս Քրիստոսի ար-  
դիւնքներուն միջոցաւ ըզայն խոստա-  
ցած է բոլոր սրատնց իրեն ծառայող-  
ներուն և թէ անոր համար որ ինք  
ամենահաւատարիմ և ամենակարող ըլ-  
լալով՝ միշտ իր խոստումները կը  
կատարէ :

Յ. Աէք

Հ . Մէրն ի՞նչ է :

Պ . Մէրը՝ մեր հոգւոյն մէջ հեղեալ  
գերբնական առաքինութիւն մ'է , որով

զԱստուած բուն իսկ իրեն համար ամէն  
բանէ վեր և ընկերնիս ալ Աստուծոյ  
համար մեր անձին պէս կը սիրենք :

Հ . Ի՞նչ պատճառի համար պէտք է  
որ զԱստուած սիրենք :

Պ . Անոր համար պէտք է որ զԱստ-  
ուած սիրենք , որովհետև ինք գերա-  
գոյն բարին է , անհունապէս բարի և  
կատարեալ է և թէ ինք այսպէս պատ-  
ուիրած է : Պէտք է զինքնք սիրենք նաև  
իր մեծագոյն բարերարութիւններուն  
համար :

Հ . Ընկերնիս ի՞նչ պատճառի հա-  
մար պէտքէ որ սիրենք :

Պ . Ընկերնիս պէտք է որ սիրենք  
Աստուծոյնիրոյն համար , որ մեզ այդ-  
պէս կը պատուիրէ և անոր համար որ  
ամէն մարդ Աստուծոյ պատկերն է :

Հ . Մէր թշնամիներն ալ սիրելու  
պարաւու՞ր ենք :

Պ . Այս՝ նոյն իսկ մեր թշնամիներն  
ալ սիրելու պարաւու՞ր ենք . որովհետև  
անոնք ալ մեր ընկերներն են , և Յի-  
սուս Քրիստոս պատուիրած է զանոնք  
սիրել :

Հ. Հաւատոյ, Յուսոյ եւ Սիրոյ ներգործութիւններ  
ընելու վրայ

Հ. Հաւատոյ Յուսոյ և Սիրոյ ներ-  
գործութիւններ ընելու պարտաւո՞ր ենք:

Պ. Այս', պարտաւոր ենք Հաւա-  
տոյ, Յուսոյ և Սիրոյ ներգործութիւն-  
ներ ընելու երբ խելքերն սացուի,  
երբ մահուան վասնդի մէջ ըլլանք և  
կեանքերնուս մէջ շատ անգամ, մա-  
սնաւանդ փորձութեան մը յաղթելու և  
կամ քրիստոնէական պարտականու-  
թիւններնէս մէկը կատարելու համար  
հարկաւոր եղած ատեն:

Հ. Հաւատոյ, Յուսոյ և Սիրոյ ներ-  
գործութիւնները շատ անգամ ընելն  
աղէկ բա՞ն է:

Պ. Այս', յաճախ անգամ Հաւա-  
տոյ, Յուսոյ և Սիրոյ ներգործու-  
թիւններն ընելը շատ աղէկ բան է,  
որովհեաւ քրիստոնէայն այդ ներգոր-  
ծութիւններն ընելով 1. այսքան հար-  
կաւոր եղող այդ երեք առաքինու-  
թիւնները աւելի Շիւրութեամբ կը  
պահէ. 2. զանոնք կ'աճեցնէ և կը զօ-  
րացնէ իր հոգւոյն մէջ. 3. զանոնք

դրսանց ալ յայտնի կ'ընէ. 4. շատ  
մը ներգործիւնները կը շահի:

Հ. Այս ներգործութիւնները բեր-  
նով միայն կատարելը բաւակա՞ն է:

Պ. Ոչ, այս ներգործութիւնները  
բերնով միայն կատարելը բաւակա՞ն չէ,  
այլ պէտք է մաքին ուշադրութիւնը  
և սրտին ներքին ջերմեռանդութիւնն  
ալ ընկերանան:

Հ. Մի միայն մեր զօրութիւնովը՝  
ինչպէս որ պէտք է կրնա՞նք կատարել  
այս և ուրիշ քրիստոնէական առաքի-  
նութիւններու ներգործութիւնները:

Պ. Մի միայն մեր զօրութիւնովը՝  
չենք կրնար, ինչպէս որ պէտք է, կա-  
տարել այդ ներգործութիւնները, հապա  
պէտք ունինք Աստուծոյ չորհքին օգ-  
նութեանը. որն որ բոլոր սրտանց իր-  
մէն ինդրազներուն մըշ կը պարգետէ  
այդ չնորհքը:

Հ. Այս Հաւատոյ, Յուսոյ և Սի-  
րոյ երեք առաքինութիւններէն ամէ-  
նէն մեծը և գերազանցը ո՞րն է:

Պ. Այս երեք աստուծագանական  
առաքինութիւններէն ամէնէն մեծը

և գերազանցը Սէրն է, որովհետեւ միշտ  
սրբարար չնորհքի հետ կը ներկայանայ ,  
մեղ Աստուծոյ հետ կը միացնէ և մեղ  
արքայութեան արքանի կ'ընէ :

5. Ողորմութեան զործքերը քա-  
նի են :

Հ. Ողորմութեան գործքերը քա-  
նի են :

Պ. Ողորմութեան գործքերը տաս-  
նըսորս հատ են . եօթը մարմնաւոր եօթն  
ալ հոգեւոր :

Հ. Մարմնաւոր ողորմութեան գործ-  
քերն որո՞նք են :

Պ. Մարմնաւոր ողորմութեան գործ-  
քերն են . 1. Անօթիները կերակրել -  
2. Մարաւիներուն ջուր տալ . 3. Մեր-  
կերը հագուեցնել . 4. Ճամբորզները  
հիւրընկալել . 5. Հիւանդները այցե-  
լել . 6. Բանտարկեալները տեսնելու-  
երթալ . 7. Մեռեալները թազել :

Հ. Հոգեւոր ողորմութեան գործ-  
քերն որո՞նք են :

Պ. Հոգեւոր ողորմութեան գործ-  
քերն են 1. Պէտք ունեցողներուն խոր-  
հուրդ տալ . 2. Տգէսներուն սովոր-

ցընել . 3. Մեղաւորները ուղղել . 4.  
Վշտացեալները մխիթարել . 5. Նախա-  
տինքներուն ներել . 6. Անհաճոյ մար-  
դիկներուն համբերութեամբ տանիլ . 7.  
Կենդանիներուն և մեռեալներուն համար-  
Աստուծոյ ալօթք ընել .

ԱՄԷՆ ՕՐՈՒԱՆ ԵՒ ՈՒՐԻՇ ԱՂՅԹԻՆԵՐ  
Ա.ԱԼՈՏԵԱՆ աղօք

Երեսդ խայակինելի յետոյ պետք է լսել  
Աստուած իմ , քեզ երկրպագու-  
թիւն կ'ընեմ և բոլոր սրտովս զքեզ կը  
սիրեմ : Զիս ստեղծելուդ , քրիստոնեայ-  
ընելուդ և մասնաւորապէս զիս աս-  
գիշեր պահպանելուդ համար չնորհա-  
կալութիւն կը մասուցանեմ : Ինչ որ-  
ընեմ ու կրեմ , քեզի կ'ընծայեմ : Կը  
ինդրեմ որ այսօր զիս մեղքէ պահպա-  
նես և ամէն տեսակ փորձանքէ աղա-  
տես : Ա.ԱՄԷՆ :

Ետիլ պետք է լսել . Հայր մեր , Ող-  
ջոյն , Հաւասամք , Հաւասոյ , Յոււսոյ-  
և Սիրոյ ներգործութիւնները , Ուղլեր-  
թագուհին , և Ուղ հրեշտակ Աստուծոյ-  
աղօքիները :

ՕՐՈՒԱՅԻ ԱԷՀ

Գործի մը ակսելէ առաջ . Ո՞վ Տէր ,  
այս գործքս քեզի կ'ընծայեմ , կ'աղաւ-  
չեմ որ զայն օրհնես որպէս զի քու  
փառքիդ ծառայէ :

Կերակուրեն առաջ . Ո՞վ Տէր , այս  
կերակուրս քեզի կ'ընծայեմ և կը խընդ-  
րեմ որ զայն օրհնես :

Կերակուրեն ետքը . Ո՞վ Տէր չնորհաւ-  
կալ եմ քեզի որ զիս կերակրեցիր , կը  
խնդրեմ որ զիս արժանի լինես երկնաւ-  
յին սեղանդ ընդունուելու :

Փորձութիւններու ատեն . Ո՞վ Յիսուս  
իմ օգնէ լինծի , և չնորհքդ առուր որ  
քեզ չի վշտայնեմ :

Երեխյեան աղօբ

Աստուած իմ , քեզ երկրպագու-  
թիւն կ'ընեմ և բոլոր սրաովս քեզ կը  
սիրեմ : Զիս ստեղծելուդ , քրիստոնեայ  
ընկելուդ և մասնաւորապէս այս օրուան  
մէջ պահպանելուդ համար չնորհակա-  
լութիւն կը մատուցանեմ : Այսօր ինչ  
բարիք որ ըրի , քեզի կ'ընծայեմ : Կը  
խնդրեմ որ այս գլուխ զիս մեղքէ

պահպանես և ամէն տեսակ փորձանքէ  
աղատես . Ամէն :

Ետք պէտք է րսել . Հայր մեր , Ող-  
ջոյն , փառք Հօր և ներգործութիւն  
Զգլման :

Յիսուս , Մարիամ , Ս . Հայր Յովլ-  
սէփ , սիրոս , հոգիս և կեանքս ձեզի  
կը յանձնեմ :

Յիսուս , Մարիամ , Ս . Հայր Յովլ-  
սէփ , հոգեվարութեանս ստեն քովս  
գտնուեցէք :

Յիսուս , Մարիամ , Ս . Հայր Յովլ-  
սէփ , հոգիս ձեր Ս . ընկերութեան մէջ  
կ'ուզեմ քաղցրութեամբ աւանդել :

Խոստվանանքի համառօս պատրաստոթիւն

Ո՞վ ամենասխրելի Փրկիչ , չնորհք  
տուր ինծի որ այս ապաշխարութեան  
խորհրդոյն մօտենամ իմ հոգւոյս փըր-  
կութեամբ և քու փառքիդ համար :

Ամենասուրբ Կոյս , Մայր Յիսուսի  
և իմ գթած մայրիկս , ինծի համար  
չնորհք ընդունէ քու օրհնեալ Որդիէդ  
որպէս զի բոլոր մեղքերս ճանչնամ ,

գանոնք ատեմ և անկեղծութեամբ  
խոսապվանիմ:

Հայր մեր: Ողջոյն: (Յետոյ պէտք է  
Աստուծոյ առջև քննել խղճմտանքը՝  
Աստուծոյ և Եկեղեցւոյ պատուիրան-  
ներուն և վիճակի պարտաւորութիւն-  
ներուն դէմ խորհրդով, խօսքով, գործ-  
քով և զանցառութիւնով գործուած  
մեղքերուն վրայ:

Ինքինքը զղջումի բերելու համար  
պէտք է նկատի առնել թէ մեղանչելով  
ի՞նչ մեծ չարիք գործած ենք: Մահու-  
չափ մեղքով կորսնցուցած ենք Աս-  
տուծոյ շնորհքը, արքայութիւնը և  
դժոխի տանջանքներուն արժանի եղած  
ենք: Վշտացուցած ենք այնպիսի Աս-  
տուած մը որ մեր Տէրն և միանգա-  
մայն Հայրն է, որ մեզի այնչափ բա-  
րիքնեղ պարգեւած է, որ մեզ այնքան  
կը սիրէ և արժանի է որ ինքն ալ ամէն-  
քանէ վեր սիրուի և իրեն ծառացուի):

Եղանակի թիւնութիւնն են լինինքին ետք  
պէտք է ըսել, ներգործութիւն զղջման:

Խոսովաննեն ետք

(Ամէն բանէ յառաջ պէտք է շնոր-

հակալ ըլլալ Աստուծոյ իր պարգևած  
անգին թողութեանը համար: Անմիջա-  
պէս կատարելու է խոսապվանաօր գրած  
ապաշխարանքը: Պէտք է կրկնել մեղքէ  
և մեղքի առիթներէն վախչելու առա-  
ջադրութիւնը):

Յետոյ ըսել այս աղօրիք. Ո՞հ. Տէր  
իմ, ո՞րչափ բարի գտնուեցար ինձի  
համար, գործած այնքան մեղքերուս  
համար փոխանակ զիս պատճելու, այս  
Սուրբ խոսապվանանքի մէջ անհուն ո-  
գործութեամբ մը անսնց ամէնը ներե-  
ցիր ինձի: Դարձեալ բոլոր սրտանց կը  
զղջամ անսնց վրայ, և կը խոստանամ  
քու շնորհիդ օգնութեամբ այլեւս  
չմեղանչել, այլեւս քեզ չվշտացնել,  
մանաւանդ թէ կեանքին մէջ քեզի  
հասուցած վիշտերուս փոխարէն նոյն-  
քան սէր հատուցաննելով մեղքերս դար-  
մանել կը խոստանամ:

Ամենասուրբ Կոյս, երկինքի հրեշ-  
տակներն ու Սուրբերը, ձեր օգնու-  
թեամնը համար շնորհակալ կ'ըլլամ  
ձեզի: Իմ տեղս դուք ալ Աստուծոյ  
շնորհակալ եղէք իր մեծ ողորմութեամը

համար , և բարի ճամբաւ մէջ յարաւեւութեան և յառաջդիմութեան շնորհքը ընդունեցէք ինծի համար :

Հայր Մեր : Ողջոյն : Փառք Հօր :  
Ո՛վ Հրեշտակ Աստուծոյ :

\*\*\*\*\*

ՀԱՄԱՐՈՍ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒԲԲ  
ՃԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ներգործութիւն Հաւատոյ

Տէր Յիսուս Քրիստոս , հասաւասուն  
կերպով կը հաւատամ որ Ամենասուրբ  
Հաղորդութեան մէջ Մարմնովդ , Արիւ-  
նովդ , Հոգւովդ և Աստուածութեամբդ  
իրապէս ներկայ ես :

Ներգործութիւն Երկրազագութեան

Ո՛վ Տէր , այս Սուրբ Խորհուրդին  
մէջ քեզի երկրպագութիւն կ'ընեմ և  
քեզ կը դաւանիմ և կը ճանչնամ իմ  
Արարիչս , Փրկիչս , Գերագոյն Տէրս ,  
մէկ հատիկ և գերազանց բարիքս :

Ներգործութիւն խօնարհութեան

Տէր իմ , ես արժանի չեմ որ դուն  
ինծի գաս , միայն խօսք մը ըսէ և իմ  
հոգիս պիտի բժշկուի :

Ներգործութիւն զլչման

Ո՛վ Տէր , կ'ատեմ իմ ամէն մեղ-  
քերս որոնք զիս անարժան կ'ընեն քեզ  
ընդունելու իմ սրտիս մէջ . և Քու շնորհ-  
քովդ կ'առաջադրեմ մէյ մ'ալ մեղք չի  
գործելու , մանաւանդ թէ մեղաց ա-  
ռիթներէն փախչելու և անոնց վրայ ա-  
պաշխարելու դիտաւորութիւն կը գնեմ :

Ներգործութիւն յուսոյ

Տէր իմ , կը յուսամ որ Քեզ բու-  
րովին այս Սուրբ Խորհուրդին մէջ  
ինծի տալով պիտի ողորմիս ինծի և  
պիտի պարզեւես փրկութեան համար  
հարկաւոր եղած ամէն շնորհքներ :

Ներգործութիւն սիրոյ

Ո՛վ Աստուած իմ , Դուն անհունա-  
պէս սիրելի ես , Դուն իմ Հայրս , Փըր-  
կիչս , և Աստուածս ես . անոր համար  
բոլոր սրտանց Քեզ կը սիրեմ ամէն  
բանէ վեր . և Քու սիրով համար ըն-  
կերս ալ իմ անձիս պէս կը սիրեմ և  
սրտանց կը ներեմ ամէն անոնց որ զիս  
վշտացուցած են :

Ներգործութիւն բաղձանաց

Յիսուս իմ, մէծապէս կը բաղձամ  
որ հաճիս սիրոս գալու, սրպէս զի ա'յլ  
եւս երբէք Քեղմէ չի բաժնուիմ, հապա  
միշտ Քու Սուրբ Հնորհքիդ մէջ ապրիմ:

~~~~~

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌԵԼԷԽՆ ԵՏՔԲ ՀԱՄԱՅՆՑ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՂՅԹՔՆԵՐ

Ներգործութիւն Հաւասոյ

Տէր իմ Յիսուս Քրիստոս, կը հաւա-
տամ որ Գուն՝ Մարմովդդ, Արիւնովդ,
Հոգւովդ և Սստուածովթիւնովդ իմ
հոգւոյս մէջն ես, և ասոր՝ աչքերովա
տեսած ըլլալէ աւելի հստատ կերպով
կը հաւատամ:

Ներգործութիւն Երկրպագութեան

Ո'վ Յիսուս իմ, երկրպագութիւն
կը մասուցանեմ քեզի, և կը միացնեմ
ինքինքս Ամենասուրբ Կուպին. հրեշ-
տակներուն և սուրբերուն, որպէս զի
կարենամ անոնց հետ երկրպագութիւն
ընել քեզի ինչպէս որ արժանի ես:

Ներգործութիւն Ենորհակալութեան

Սստուած իմ Յիսուս, բոլոր ալ-

տանց Հնորհակալութիւն կը մասուցա-
նեմ քեզի իմ հոգիս գալուդ համար:
Ո'վ Ամենասուրբ Կոյս Մարփամ, Պահա-
պան հրեշտակս և դուք ամէնքդ, ո'վ
երկնքի հրեշտակներն ու սուրբերը,
իմ աեղս Հնորհակալ եղէք Յիսուսի:

Ներգործութիւն սիրոյ

Տէր իմ Յիսուս, կը սիրեմ զքեզ
որչափ որ կրնամ, և կը բաղձամ սիրել
քեզ որչափ որ դուն արժանի ես:
Շնորհքդ տուր որ թէ՛ հոս և թէ՛ յա-
ւիտենականութեան մէջ քեզ ամեն
բանէ վեր սիրեմ:

Ներգործութիւն բնծարեան

Յիսուս իմ, դուն քեզ բոլորովին
ինծի առուիր, ահա ես ալ ինքինքս
բոլորովին քեզի կ'լնծայեմ: Քեզի կը
նուրիս սիրոս, հոգիս, բոլոր կեսն-
ուիրեմ սիրոս, և ամբողջ յաւիտենականութեան
մէջ կ'ուզեմ քուկդ ըլլալ:

Ներգործութիւն յուսոյ

Փրկիչ իմ Յիսուս, հիմա որ սիրոս
եկած ես, կը յուսամ որ ա'յլեւս պիտի
9

չբաժնուիս ինծմէ, և քու շնորհքովդ
միշտ պիտի մնաս ինծի հետ :

Ներգործութիւն խնդրուածոց

Սիրելիդ իմ Յիսուս, կը խնդրեմ որ
հաճիս շնորհել ինծի այն ամէն հոգե-
ւոր ու մարմնաւոր շնորհքները որոնք
գիտես թէ օգտակար պիտի ըլլան իմ
հոգւոյս : Օգնէ մեծաւարներուս, ծնողք-
ներուս, բարեկամներուս, բարերարնե-
րուս և քաւարանի սուրբ հոգիներուն :

~~~~~

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱԲԱՌԱՆԻ ԽՈՐՀՈՒԹՅԱՆԵՐԸ  
Ուրախութեան խորհուրդներ  
(Երկուօւթիւն եւ Հինգօւթիւն)

1. Հրեշտակին՝ Ամենասուրբ Կու-  
սին աւետիս տալը :
2. Ամենասուրբ Կուսին Սրբուհի  
Եղիսաբեթին այցելութեան երթալլ-
3. Բեթղեհեմի այրին՝ մէջ Յիսուս-  
Քրիստոսի ծնունդը :
4. Յիսուս Մանուկին՝ տաճարի մէջ  
լնձայուիլը :

5. Յիսուսի կորսուելէն երեք օր  
ետքը տաճարին մէջ նորէն գտնուիլը :

Տրմութեան խորհուրդներ (Երեխօւթիւն եւ Աւրբար)

1. Գեթսեմանի պարտէզին մէջ Յի-  
սուսի հոգեվարք քաշելը :

2. Սիւնին կապուելով Յիսուսի  
ձաղկուիլը :

3. Յիսուսի փշով պսակուիլը :

4. Խաչը ուսն առած Գողգոթայի  
լեռը ելլելը :

5. Յիսուս Քրիստոսի խաչուիլը և  
մեռնիլը :

Փառաւորութեան խորհուրդներ (Գօ. Շբ. եւ Կիր.)

1. Յիսուս Քրիստոսի փառաւոր  
յարութիւնը :

2. Երկինք համբառնալը :

3. Հոգին Սուրբին՝ Առաքելոց և  
Ամենասուրբ Կուսին վրայ իջնալը :

4. Ամենասուրբ Կուսին երկինք վե-  
րափոխուիլը :

5. Ամենասուրբ Կուսին բոլոր հրեշ-  
տակներէն և Սուրբերէն վեր պատկուիլը :

~~~~~

Ողջ լե՛ր , թագուհի , մայր ողորմութեան , կեանք . քաղցրութիւն և յոյս մեր , ողջ լե՛ր : Առ քեզ գոչեմք աքսորեալ որդիքս Եւայի . առ քեզ հառաչեմք հեծեծելով և ողբալով յայսմ արտասուաց վայրի : Արդ , ո՞վ բարեխօս մեր , դարձո՞ւ առ մեզ զաշս ողորմութեան քո . և զթիսուս զօրհնեալ պառուզ որովայնի քո յետ այսր աքսորանաց ցոյց մեզ , ո՞վ գթած , ո՞վ բարեգութ , ո՞վ քաղցր կոյս Մարիամ :

Սղաչեա վասն մեր Առորք Աստուածածին . Զի արժանի եղիցուք խոսամանցն Քրիստոսի :

Լիքանիա ՚ի պատիւ Ամենասուրբ Կուսին

Տէր ողորմեաց

Քրիստոս ողորմեաց

Տէր ողորմեաց

Քրիստոս լուր մեզ .

Քրիստոս անսա մեզ .

Հայր Երկնաւոր Աստուած , ողորմեաց մեզ :

Բրդի Փրկիչ աշխարհի Աստուած , ողորմեաց մեզ :

Հոգիդ Ս . Աստուած , ողորմեաց մեզ :
Ս . Երրորդութիւն մի Աստուած , ողորմեաց մեզ :

Սրբուհի Մարիամ , աղօթեա վասն մեր :

Ս . Աստուածածին , աղօթեա վասն մեր :

Ս . Կոյս Կուսանաց , աղօթ .

Մայր Քրիստոսի , աղօթ .

Մայր Աստուածային Հնորհաց , աղօթ .

Մայր մաքուր , »

Մայր սուրբ , »

Մայր անարատ , »

Մայր անրիծ , »

Մայր սիրելի , »

Մայր սքանչելի , »

Մայր բարի Խորհրդոյ , »

Մայր Արարշին , »

Մայր Փրկչին , »

Կոյս իմաստուն , »

Կոյս յարգոյ , »

Կոյս քարոզելի , »

Կոյս հզօր , »

Կոյս զթած , »

Կոյս հաւատարիմ , »

Հայելի արդարութեան , »

Սթոռ իմաստութեան , »

Պատճառ մերոյ խնդռւթեան , Սղօթ .
 Անօթ հոգեւորական , »
 Անօթ պատռւելի , »
 Անօթ ընտիր աստռւածպաշտու-
 թեան , »
 Վարդ խորհրդական , »
 Աշտարակ Դաւթեան , »
 Աշտարակ փղոսկրեայ , »
 Տուն ոսկեղէն , »
 Տապանակ ուխտի , »
 Դուռն երկնից , »
 Աստղ առաւօտիան , »
 Առողջութիւն հիւանդաց , »
 Ապաստան մեղաւորաց , »
 Մխիթարիչ վշտացելոց , »
 Օգնական Քրիստոնէից , »
 Թագուհի հրեշտակաց , »
 Թագուհի նահապետաց
 Թագուհի մարգարէից , »
 Թագուհի առաքելոց , »
 Թագուհի մարտիրոսաց , »
 Թագուհի խոստովանողաց , »
 Թագուհի կուսանաց
 Թագուհի ամենայն սրբաց

Թագուհի յղացեալ առանց ա-
 րասոյ մեղաց , աղօթ .
 Թագուհի ամենասուրբ Վարդարանի , »
 Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս
 աշխարհի , խնայեա' ի մեղ Տէր :
 Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս
 աշխարհի , անսա մեղ Տէր :
 Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս
 աշխարհի , ողորմեաց մեղ :
 Յիսուս լուր մեղ .
 Քրիստոս անսա մեղ :



Ա. Պ. Թ. Ք.

Աստուած անձառելի սղորմութեան՝
որ ոչ միայն մարդ, այլ և որդի մար-
դոյ լինել հաճեցար և ծնանելով ի կուսէ
զմայր ի յերկրի ստացար, որ զԱստ-
ուած ունէիր Հայր ի յերկինս, տուր
մեղ աղաչեմք, զիշատակ նորա յօժա-
րութեամբ կատարել, զմայրութիւն
նորա գերագոյն յարգանօք պատուել,
գերազանցագոյն վսեմութեան նորա
զմեղ խոնարհութեամբ հպատակել, որ
զքեղ հոգւով սրբով յլացաւ, զքեղ
կուսութեամբ ծնաւ, և զքեղ ի յերկրի
ինքեան հնազանդ կալաւ զՏէրդ մեր
Յիսուս քրիստոս։ Որ կենդանի ես և
թագաւորես ընդ Հօր և ընդ Սրբոց
Հոգւոյն ի յաւիտեանս, ամէն :

Բնդ հովանեաւ պաշտպանութեան
քո ապաւինիմք սուրբ Աստուածածին,
զազանս մեր մի՛ անտես առներ
ի կարիս մեր, այլ միշտ փրկեա զմեղ
յամենայն վտանգից, փառաւորեալ և
օրհնեալ միշտ Սուրբ Կոյս :



30696



